Azg Ազգ

12 ՅՈՒԼԻՍ 2008 ՇԱԲԱԹ 133 (4027)

Յովանովիչը գործածում է Մեծ եղեռն կաղակցությունը

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանի թեկնածու Մարի Յովանովիչը պատասխանել է դեմոկրատ սենատոր, ԱՄՆ նախագահի թեկնածու Բարաք Օբամայի հարցերին: Ըստ Վաշինգտոնի հայ դատի գրասենյակի, Մ. Յովանովիչը պատասխանել է. «ԱՄՆ կառավարությունը եւ, իհարկե, ես սգում եմ զանգվածային սպանությունների, էթնիկ զտումների եւ բռնի տեղահանության համար, որն Օսմանյան կայսրության վերջին երջանում խլեց 1,5 միլիոն հայերի կյանք: ԱՄՆ-ը ճանաչում է այդ իրադարձությունները որպես 20-րդ դարի ամենամեծ ողբերգություն, «Մեծ եղեռն», ինչպես շատ հայեր անվանում են: Դա է պատճառը, որ ամեն ապրիլի ԱՄՆ նախագահը հարգում է զոհերի հիշատակը եւ արտահայտում իր զորակցությունը հայ ժողովրդին: Որպես փախստականի ընտանիքի զավակ (այլ վայրից եւ այլ ժամանակաշրջանում) ես խորապես հասկանում եմ հայ ժողովրդի վիշտն ու տառապանքն այն ժամանակ եւ ներկայում, երբ հիշում եմ նրա պատմության այդ սեւ էջի մասին: Ես եւս սգում եմ անմեղ կյանքերի կորուստն ու հարգում ամերիկահայ համայնքի, ողջ հայ ժողովրդի ջանքերը՝ իրենց ցավն ու կորուստը տեսնել ճանաչված եւ ընդունված»: Սենատի որոշումը թեկնածությունը հաստատելու վերաբերյալ տեղի կունենա այս ամիս:

Արա Աբրահամյան. «Հայաստանին կայունություն է պետք տնտեսական զարգացման համար»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի վերջերս Ռուսաստան կատարած այցը համարվում է ավելի քան հաջող: Սակայն հանրապետությունում քաղաքական իրադրությունը շիկանում է. ընդդիմադիրներն անցկացնում են հանրահավաքներ, անտեսելով նոր նախագահի առաջին հաջողությունները: Այցի արդյունքների, հանրապետությունում տիրող իրադրության եւ Հայաստանի ծրագրերի մասին «Իզվեստիայի» թղթակցին պատմեց Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը:

- Հայաստանը ներկայումս բավական բարդ վիճակում է. ընդդիմությունը շարունակում է իր հանրահավաքները: Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեիք Հայաստանի իրադրությունը ներկա փուլում:

- Հայաստանում ստեղծված իրավիճակը դժվար է գնահատել համաշխարհային համատեքստից դուրս: Այսօր աշխարհը ֆինանսական, պարենային լուրջ ճգնաժամի մեջ է: Սննդամթերքի գների աճը հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքի վրա անդրադարձել է ոչ միայն նոր զարգացող, այլեւ Արեւմուտքի ամենազարգացած երկրներում: Կտրուկ աճում են էներգակիրների գները, եւ դա հանգեցնում է պարուսի թանկացման այն բոլոր բնագավառներում, որտեղ առկա են նավթը, գազը, էներգետիկան: Բացի դրանից, աշխարհը թեւակոխել է ֆինանսական խոր ճգնաժամի փուլ: Այդ երեք գործոններն ազդում են առաջին հերթին այն երկրների կյանքի վրա, որոնք դեռ չեն բռնել կայուն զարգացման ուղին, դեռ չեն ստեղծել ժամանակակից տնտեսություն: Հայաստանի ընդհանուր աշխարհաքաղաքական իրավիճակը չի բարելավվում: Վրաստանը ձգտում է դեռեւ ՆԱՏՕ, Ադրբեջանն առայժմ չի հայտարարել այդ մասին, բայց թերեւս դեռ չէ: Նման պայմաններում լուրջ սպառնալիք է ծագում Հայաստանի հարեւանի համար, որը նրան արտաքին աշխարհ դուրս գալու հնարավորություն է տալիս, բարդացնելով է վերաբերվում հանրապետությանը եւ որոշակի տնտեսական ու քաղաքական աջակցություն է ցույց տալիս: Խոսքն Իրանի մասին է, որին այսօր ԱՄՆ-ը եւ Իսրայելը սպառնում են ռմբահարվածներով: Շարունակվում է Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը: Նախագահական ընտրությունների տարում ուժեղանում են Հայաստանին հասցեին պատշաճական Բաքվի ոգեշնչումները: Հայաստանի մյուս հարեւանը՝ Վրաստանը, որի տարածքով անցնում է Հայաստանի բեռնափոխադրումների մեծ մասը, ինքը հակամարտություն ունի Ռուսաստանի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ, ինչը նույնպես չի նպաստում տարածաշրջանի կայունության ամրապնդմանը:

Տես էջ 2

ՔԵՆԿՍԵ

Պետական բուհեր առայժմ դիմում է ներկայացրել 3700 մարդ

Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ հուլիսի 10-ի տվյալներով դիմում-հայտ է ներկայացրել շուրջ 3700 դիմորդ: Ըստ Ամենայրեսի, այս տարի եւս շրջանավարտների մեծ մասը՝ 1290 հոգի, դիմել է ԵՊՀ: Երկրորդ տեղում է Հայաստանի Ս. Արովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը՝ 564, երրորդում՝ Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը՝ 507 դիմորդով: Առաջ հաջորդում են Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ 383, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը՝ 315, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ 272 դիմումով: Հայաստանի պետական ագրարային համալսարան առայժմ դիմել է 173, իսկ Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարան՝ 122 դիմորդ:

Ըստ մասնագիտությունների՝ առաջին տեղում է ԵՊԲՀ-ի «Բուժական գործը»՝ 389 դիմորդ, ապա 100 եւ ավելի ցուցանիշ ունեն հետեւյալ մասնագիտությունները՝ ԵՊԼՀ «Լեզվաբանություն եւ միջմշակութային հաղորդակցություն. անգլերեն լեզու»՝ 154, ԵՊՀ «Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա»՝ 142, «Իրավագիտություն»՝ 102, ՀՊՃՀ «Քոմփյութերային համակարգերի եւ ինֆորմատիկայի դասարանները»՝ 116 դիմորդ: Հիշեցնենք, որ յուրաքանչյուր տարի ՀՀ բուհերն ունենում են շուրջ 13 հազար դիմորդ:

Թոմաս Համարբերգը գալիս է Հայաստան

ՏԻՄՈԹԻ ԼԻՆՅԵՆ
Մտրաբուդ-Երեւան

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգը կիրակի օրը երեւան այցով ժամանում է Երեւան, մարտադաշտում մարտի 1-2-ի զանգվածային անկարգությունների հետաքննությունը ուսումնասիրելու: Այդ մասին երեկ հայտնել է ԵԽ Երեւանի տեղեկատվական գրասենյակը: Հանձնակատարը կգնահատի «նախագահական ընտրություններից հետո մարտին հանրահավաքների կարգակցությամբ տեղի ունեցած բռնությունների հետաքննության առաջընթացը», նշվում է հաղորդագրությունում:

«Այս այցը մաս է կազմում Հայաստանի իշխանությունների հետ ընթացող երկխոսության եւ հաջորդում է անցած հոկտեմբեր եւ մարտին կատարած այցերին», ասել է հանձնակատարը: Նա հիշեցրել է, որ Հայաստանի մասին իր վերջին զեկույցում կոչ է արել համապարփակ հետաքննություն անցկացնել մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ: «Ես նաեւ ի գիտություն եմ ընդունել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից վերջերս ընդունված Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների գործունեության մասին բանաձեւը»:

Հանձնակատարը հանդիպումներ կունենա Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, խորհրդարանի եւ կառավարության ներկայացուցիչների, ՀՀ գլխավոր դատախազի եւ խորհրդարանի ժամանակավոր հետաքննող հանձնաժողովի անդամների հետ: Նա կհանդիպի կալանավորված անձանց եւ նրանց փաստաբանների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Տես էջ 3

Նախագահը այցելել է Սուրբ Էջմիածին

Նախագահի պատշոնը սանձնձելուց հետո առաջին անգամ Սերժ Սարգսյանն այցելեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, որտեղ նրան ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոսը: Այցի նպատակն էր ծանոթանալ Մայր աթոռում իրականացվող բարեկարգման եւ կառուցապատման աշխատանքներին: Այստեղ իրականացվում են Ս. Վարդան եկեղեցու, դրա մկրտարանի եւ Հովհաննես Մկրտիչ մատուռի կառուցման աշխատանքները, որոնց ընթացքին Վեհափառ հայրապետի ուղեկցությամբ ծանոթացավ նախագահը: Բարեկարգման եւ նորոգման աշխատանքներ են իրականացվում նաեւ Մայր տաճարում, որոնց ավարտը նախատեսված է մինչեւ այս տարվա սեպտեմբերի 28-ը: Մայր աթոռում իրականացվող բարեկարգման աշխատանքների համար անհրաժեշտ հիմնական ֆինանսական միջոցները ստացվել են բարեգործներից, մասնավորապես, Ռիչարդ Մանուկյանից:

Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշան հանձնվեց ակադեմիկոս Մերգելյանին

ԱԳՆ-ից հաղորդում են, որ Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Լիլոյանը Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշան է հանձնել ԱՄՆ-ում բնակություն հաստատած անվանի գիտնական, Երեւանի մաթեմատիկական մեքենաների հետազոտական ինստիտուտի հիմնադիր, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանին: Նա պարգեւատրվել էր ՀՀ նախագահի մայիսի 26-ի հրամանագրով: Հանձնելով շքանշանը՝ գլխավոր հյուպատոսը ընթերցել է նաեւ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական նամակը Ս. Մերգելյանի 80-ամյա հոբելյանի առիթով: Ակադեմիկոս Մերգելյանը շնորհակալություն է հայտնել երկրի ղեկավարությանը իր գործունեությունը բարձր գնահատելու համար:

Ջերմուկում մեկնարկեց «Բազե» համահայկական հավաքը

Ամենամյա համահայկական երիտասարդական հավաքը Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում մեկնարկեց երեկ եւ կտեւի մինչեւ հուլիսի 18-ը: Հավաքին մասնակցում են 18-30 տարեկան շուրջ 650 երիտասարդներ Հայաստանից, Արցախից, Ջավախքից եւ սփյուռքից: «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի հանդիսավոր բացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանը, Վայոց ձորի մարզպետ Վարդան Մաթեւոսյանը եւ այլք:

«Ժառանգության» համագումարից դեռ ջրերը չդարձվեցին

Բայց 2009-ին գուցե «Ժառանգությունը» բոյկոտի խորհրդարանի աշխատանքը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Ժառանգություն» կուսակցության երեկվա՝ 5-րդ համագումարից սպասելիքներ կային, որ վերջապես կիմացվի՝ այս կուսակցությունը մաս կազմելու է Տեր-Պետրոսյանի ձեռնարկած Ազգային կոնգրեսին, մասնակցություն ունենալու է մարտի 1-ի իրադարձությունները քննող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքին եւ այս բնույթի մի շարք հարցերի պատասխանը կլսվեր: Համագումարին ներկա էին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, Հրանտ Մարգարյանը, Ստեփան Դեմիրճյանը, Արամ Զ. Սարգսյանը, ՄԻՊ Արմեն Հարությունյանը («Ժառանգության» մյուս խորհրդարանական գործընկերները ներկայացուցիչ չէին ուղարկել), իսկ երբ ողջույնի խոսքով հանդես էր գալիս Ժիրայր Սեֆիլյանը շախմբով դահիճ մտավ նաեւ Լ. Տեր-Պետրոսյանը՝ իր կողմնակից կուսակցությունների հետ ձեռքով բարեւելով նաեւ վարչապետին եւ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցչին:

Վարչապետ Տիգրան Սարգսյանը նաեւ ելույթ ունեցավ, ողջունելով «Ժառանգությանը»՝ նկատեց, որ եկել է կամուրջներ կառուցելու, կամուրջներ այրելը հեշտ է, կառելն է դժվար. «Մենք չենք վախենում քննադատությունից եւ համարձակ առաջարկներից, մենք ունենք դրանց կարիքը... Մենք ունենք ընդհանուր նպատակ՝ տեսնել ՀՀ-ն որպես ժողովրդավարական, իրավական, զարգացած պետություն, ընդհանուր նպատակին հասնելու համար ունենք բավարար ընդհանուր եզրեր, ներկա քաղաքական իրավիճակում առաջարկում եմ շեշտը դնել ոչ թե իրար բաժանող, այլ միավորող կետերի վրա... Թույլ չտամ, որ մեր նպատակները փոշիանան պայքարի աղմուկների մեջ, թույլ չտամ, որ դրանք դառնան քաղաքական շահարկման մանրադրամ. հուսով եմ, որ իմ այս կոչը ձիշտ կընկալվի, համագործակցության դռները միշտ բաց են Ձեր առջեւ», բարեմաղթեց առաջարկեց նա: Սակայն, ակնհայտորեն, ոչ նա, ոչ Հրանտ Մարգարյանն իրենց հարմարավետ չէին զգում, հատկապես ելույթով հանդես եկած Տեր-Պետրոսյանի խոսքի ընթացքում:

Տես էջ 3

Արմեն Հարությունյանն ամփոփեց իր պաշտոնավարման արդյունքները

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը երեկ ամփոփեց իր պաշտոնավարման 6 ամիսների արդյունքները: Անցած տարվա համեմատությամբ այս տարի 30 տոկոսով ավելացել են բողոքները ՄԻՊ դիմեն: Նույն այս ժամանակահատվածում անցած տարի 36 դրական լուծում է տրվել բողոքներին, իսկ այս տարի՝ 87 դրական լուծում: Ըստ բողոքների հանձնի առաջին տեղում է ոստիկանությունը, երկրորդում՝ դատարանները, երրորդում՝ երեւանի հաղթաթեաթերանը, չորրորդում՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, հինգերորդ տեղում դատախազությունն է: Հաշվի առնելով կոնկրետ դեպքերը, ըստ Հարությունյանի՝ անձերի հաշիվները չեն հավակնում ճանաչիվ, եւ սպասվում է, որ առաջին տեղում է հատուկ քննչական ծառայությունը, երկրորդում՝ երեւանի հաղթաթեաթերանը, երրորդում՝ ոստիկանությունը, չորրորդում՝ դատախազությունը, վերջում՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

Հարությունյանը ներկայացրեց այն դիտողությունները, որոնք գրասենյակը տվել է հատուկ քննչական ծառայության ոչ Անդրանիկ Միրզոյանի՝ Վայոց ձորի դատախազին ուղղված նամակ հանձնարարականի վերաբերյալ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ոչ-ի հանձնարարությունը վերնագրված է՝ «Քննչական հանձնարարություն ՀՀ հեռակա դատավարական օրենսգրքով 191-դ հոդվածի կարգով»: Համաձայն դրա՝ այլ վայրում քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավունք ունի այդ գործողությունները կատարելու անձամբ կամ հանձնարարելու վայրի քննիչին: «Քննչական հանձնարարություններ չեն կարող տալ դատախազին, նրա հաստատությունը պետք է լինի բացառապես նախաքննության կամ հետաքննության մարմինը: Քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում նման խնդրանքով դատախազին դիմելու հնարավորություն: Անհրաժեշտ է պարզել, թե Վայոց ձորի դատախազը ինչպիսի գործողություններ է իրականացրել այդ հանձնարարության հիման վրա: Տվել են արդյոք ցուցումներ ոստիկանությանը, եթե այո, ապա դրանք անօրինական են, քանի որ նա չվյալ գործով իսկող դատախազ չէ եւ չի կարող ներգրավել գործի մեջ նման քննչական հանձնարարության հիման վրա: Ավելին, կարող է կասկածի տակ դրվել նաեւ այս հանձնարարությամբ կատարված քննչական եւ օպերատիվ հետախուզական գործողությունների իրավաչափությունը, ինչպես նաեւ ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը», ասաց Արմեն Հարությունյանը:

Ըստ պաշտոնյայի, այդ քննչական հանձնարարությունը պարունակում է քննչական, դատավարական եւ օպերատիվ հետախուզական գործողությունների իրավաչափությունը, ինչպես նաեւ ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը: «Հանձնարարությունը նախատեսում է միջնորդությամբ դիմել դատարան մուտքային եւ ելքային զանգերը վերծանելու թույլտվության նպատակով: Այսպիսի միջնորդությամբ դիմելը զանգը չի կարող դիտվել քննչական գործողության կատարում, չի կարող հանձնարարվել դատարանի հետ: Մեր օրենսդրությունը դեռեւս գործում է քննությունը հայցի չէ, որը բերում է սահմանված դատավարական դեռեւից», ընդգծեց օմբուդսմենը:

ՄԻՊ-ը գտնում է, որ հատուկ քննչական ծառայության պետ Անդրանիկ Միրզոյանի՝ Վայոց ձորի դատախազին ուղղված նամակը հեռական օրենսգրքի խախտում է:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ԱԱԾ-ն կդիտարկի՞ Արմեն Հարությունյանին եւ նրա ընտանիքի անվտանգությունը, ապա Հարությունյանի ներկայացմամբ՝ ԱԱԾ-ն իրեն խնդրում է տրամադրել փաստեր կամ տեղեկություններ, որոնք հիմք են հանդիսացել դիմումի համար. «Եթե ԱԱԾ-ն համարում է, որ մարդու իրավունքների պաշտպանը պաշտպանված է, մենք խնդիրներ չունենք, իսկ եթե համարում է, որ պետք է փաստեր տանք՝ այստեղ էլ անելիքներ չունենք»:

Անդրադառնալով մարտի մեկին Ազատության հրապարակում տեղի ունեցած իրադարձություններին, Հարությունյանը կարծիք հայտնեց, թե իր համար պարզ չէ՝ մարտի մեկի առավոտյան Ազատության հրապարակում ինչ է պատահել. «Իրազեկված չի եղել այդ հանդիպմանը, բայց չիրազեկման դեպքում պետք է պարզել՝ համաձայն են եղել մարտի մեկի գործողությունները. ես այդ խնդիրն եմ դնում, ուրիշ խնդիր չեմ դնում: Իմնաբուխ էին համարում, բայց ընդդիմադիր որոշ թերթեր իրազեկում էին, որ այս ինչ ժամին, այս ինչ տեղում լինելու է հանդիպում: Հիմա դա իմնաբուխ էր, թե՞...»:

«Ինձ համար, օրինակ, պարզ չէ՝ լրագրողների գործունեությունը ինչո՞ւ խոչընդոտվեց, թող նկարահանեին, մենք էլ պարզեինք՝ ինչ է կատարվել: Կտեսնեինք՝ ինչ է կատարվել՝ կիասկանայինք», հավելեց նա:

Գուցե չմասնակցի հանձնաժողովի աշխատանքներին

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը երեկ հայտնեց, որ չի բացառում իր մասնակցության դադարեցման հնարավորությունը մարտի 1-ի դեպքերը հետաքննող խորհրդարանի ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներին. «Եթե ես զգամ, որ հանձնաժողովի աշխատանքներին իմ մասնակցությունը անիմաստ է դառնում, ես չեմ մասնակցի: Քանի որ ես չեմ կարող շաբաթը մեկ անգամ 3-4 ժամ տրամադրել հանձնաժողովի աշխատանքներին»:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ռոբերտ Քոչարյանը լավն էր, Սերժ Սարգսյանն էլ վատը չէ

Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիները նշանակալի բարեփոխումներով են առանձնանում ՀՅԴ բյուրոյի անդամ Աղվան Վարդանյանի կարծիքով. «Մենք իսկապես լավ նախագահ ենք ունեցել»: Նույն տարիներին բացթողումը եղել է քաղաքական համակարգի անկատարությունը: Իսկ այսօր, բանախոսը գտնում է, որ կառավարությունը «իսկայական գործ է փորձում անել» ժողովրդի կյանքը բարելավելու ուղղությամբ. «Վստահ եմ, որ արդյունքներ լինելու են, թեեւ հասարակության մի մասը դրանք համարյա չի նկատելու»: ՀՅԴ բյուրոյի անդամ Աղվան Վարդանյանը համակարծիք է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ մարտի մեկի իրադարձություններում ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի դերակատարության գնահատման հարցում: Մարտի մեկին տեղի ունեցածի կանխումը կարող էր արգելել, բայց միջոցներ չարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը, երեկ ՄԱՄ-ում կարծիք հայտնեց Աղվան Վարդանյանը: Նա գտնում է, որ չարտնված հանդիսավարների շարունակականությունը տեղի ունեցածին կհանգեցներ. «Եթե չեմ սխալվում, կարծես լրագրողներին հայտարարեց՝ ես շատ հանգիստ խղճով ելեցի այդ գիշեր: Եթե շարունակվին չարտնված հանդիսավարները, ի վերջո, նման մի բան տեղի էր ունենալու, որովհետեւ քաղաքական այդ ուժի կամ ուժի չասեմ, քաղաքական այդ ժայռության ղեկավարի հիմնական նպատակն այս էր»: Այդուհանդերձ Աղվան Վարդանյանը ողջունելի կհամարի, եթե վերջին շրջանում անընդհատ շրջանավող 3-րդ ուժ ձեւավորվի՝ դրա համար դաշտ կա: Քաղաքական համակարգի կայացման համար գաղափարներ, ծրագրեր ունեցող, միմյանց հետ մրցող 3-4 ուժերի գոյությունը ողջունելի անհրաժեշտություն է. «Բայց հաճախ քաղաքական ուժերը ձեւավորվել են մեկ անձի շուրջը, իրավիճակային խնդիր լուծելու համար: Մեկ տարվա գործունեություն են ունեցել եւ բացարձակապես չեն նպաստել քաղաքական համակարգի կայացմանը»:

Այնուհետեւ բանախոսն անդրադարձավ Հայաստանի արտաքին մարտահրավերներին: Դրանցից գլխավորը Հայաստանի միջազգային վարկի վերականգնումն ու ամրապնդումն է, բարոյահոգեբանական մթնոլորտի վերականգնումը, նաեւ աջակցությունը այն ծրագրերին ու նպատակներին, որոնք քաղաքական կոալիցիայի առաջնահերթություններ են համարում են: «Գաղտնի չէ, որ այս առումով այսօր խնդիրներ ունենք: Ինձ թվում է՝ դրանց զգալի մասը աղբյուր է առաջատար ընդդիմության ոչ ադեկվատ գործողությունների ու մոտեցումների: Խորապես համոզված եմ, որ այս քաղաքական ուժերը, որոնք այսօր իշխանություն են, ունեն քաղաքական կամք՝ խնդիրները լուծելու եւ երկիրը զարգացման որակապես նոր փուլ դուրս բերելու գործողություններ են ծավալում»: Ղարաբաղում կատարվող որակական փոփոխությունները, ըստ Աղվան Վարդանյանի, դուրս են մնացել հանրության ուշադրությունից: Մինչդեռ բանախոսը վստահ է, զգալիորեն բարձրացել է ժողովրդի վստահությունը Արցախի իշխանությունների նկատմամբ, փոքր տարածքում լուրջ ծրագրեր են իրականացվում, պետության որակական նոր մոդել է ձեւավորվում:

Հայ-թուրքական հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարության առնչությամբ Աղվան Վարդանյանն ասաց, որ ՀՅԴ-ականները եկել են այն համոզման, որ նախագահը հայոց ցեղասպանության հարցը վիճարկելի չի համարում: Հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ էլ բանախոսը կարծիք հայտնեց, որ հենց Թուրքիան է Հայաստանի հետ նախապայմաններով խոսում, պատասխանում Արդեքջանին. «Այդ իմաստով հետո Թուրքիայի նախագահն ինչպե՞ս է որոշելու գալ մի երկիր (ֆուտբոլ դիտելու), որի հանդեպ իրեն նման մոտեցումներ ունեն»:

Ն. Պ.

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ՍԱՄՈՒԼ

Արա Աբրահամյան. «Հայաստանին կայունություն է պետք տնտեսական զարգացման համար»

1-ին էջից

- Ձեր կարծիքով, ռուս-հայկական հարաբերությունները եւ ռուս-հայկական կոոպերացումը կկարողանա՞ն արդյոք մեղմացնել Հայաստանի վրա այն բացասական երեւույթների ազդեցությունը, որոնք այսօր ի հայտ են եկել համաշխարհային տնտեսության մեջ:

- Այո, իհարկե: Այդ են վկայում Հայաստանի նախագահի Մոսկվա կատարած շատ հաջող այցելության արդյունքները: Այցի ընթացքում կարեւոր պայմանավորվածություններ ձեռք բերվեցին գազի գների, Հայաստանում ալմաստի մշակման գործարանների հումքի մատակարարումների շուրջը:

Կարեւոր համաձայնություններ են ձեռք բերվել ռազմատեխնիկական համագործակցության, տրանսպորտի եւ երկկողմ հարաբերությունների այլ կարեւորագույն ոլորտներում: Մենք է, որ այդ պայմանավորվածությունները կենսագործվեն:

Այցի ընթացքում Հայաստանի նախագահը հանդիպում ունեցավ Ռուսաստանի հայ համայնքի հետ եւ Ռուսաստանի գիտության մշակույթի ու գործարար շրջանակների նշանավոր գործիչներին կոչ արեց առավել ակտիվորեն մասնակցել Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ գիտական ու մշակութային կյանքին, իրականացնել կոնկրետ նախագծեր, ամրապնդել Հայաստանի եւ Ռուսաստանի համակողմանի կապերը:

Մեր երկու երկրների հարաբերությունների խորացումը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում դուր է գալիս ոչ բոլոր քաղաքական ուժերին: Ուստի հասկանալ կարելի է, որ այցի ընթացքում ձեռք բերված համաձայնություններն իրականացվեն ժամանակին եւ ամբողջ ծավալով: Դրանց իրագործման ամեն մի ձգձգում Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմավարական գործընկերության դեմ կարող են օգտագործել այն ուժերը, որոնք գտնում են, որ դեռի Ռուսաստան Հայաստանի հասակ կողմնորոշումը հարկ եղած չափով չի լուծում Հայաստանի տնտեսության եւ պետության հիմնահարցերը: Բարեբախտաբար, այդ տրամադրություններն առայժմ որոշիչ չեն հանրային կարծիքի մեջ եւ քաղաքական երաշխիքներում: Բայց վերջին տարիներին նկատվող դրանց աճը չի կարող չսազդանշեցնել երկու երկրների քաղաքական գործիչներին, որոնք շահագրգռված են Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմավարական գործընկերության խորացմամբ:

- Իհարկե, Հայաստանի ներքաղաքական իրադրությունը զարգանում է ինչպես համաշխարհային բարդ համատեքստում, այնպես էլ ռուս-հայկական հարաբերությունների առանձնահատուկ համատեքստում: Որո՞նք են գոյություն ունեցող վարչակարգին նեսվող ներքին մարտահրավերները:

- Այդ բոլոր հանգամանքները հաշվի առնելով կարող եմ ասել, որ Հայաստանի տնտեսությունն առանց էական արտաքին աջակցության շատ դժվարությամբ կհաղթահարի այն բոլոր մարտահրավերները, որոնք մեծ դժվարությամբ են հաղթահարում նույնիսկ ԱՄՆ-ը, Եվրոմիությունը երկրները, մի ամբողջ շարք ուրիշ, առավել զարգացած պետություններ: Ընտրություններում կրած պարտության մտի հետ չհաշտվող ընդդիմությունն այդ պարտությունները օգտագործում է երկրի իրադրությունն աղակայունացնելու համար, որպեսզի իշխանության վերադառնա հանրահավաքների եւ ցույցերի միջոցով:

Հանրաքեսության իշխանությունները ներկայումս փորձում են նոր թիմի ուժերով առկա ներքին ռեսուրսները միավորել այդ դժվարին մարտահրավերներին պատասխանելու համար: Բացի դրանից, Հայաստանի ղեկավարությունը նաեւ փորձում է առավել ներգրծուն մեխանիզմ ստեղծել հանրաքեսության սոցիալական ու տնտեսական խնդիրների լուծման մեջ սպիտակահալության հնարավորություններն օգտագործելու նպատակով: Ես գտնում եմ, որ տվյալ փուլում անհրաժեշտ է աշխարհի բոլոր հայերի ջանքերը կենտրոնացնել Հայաստանին եւ նոր նախագահին ու նրա թիմին օգնելու այն ծրագրերի իրականացման գործում, որոնք նախագահն առաջ էր քաշել ընտրարշավի ժամանակ: Այսօր, ավելի քան երբեւէ, Հայաստանին կայունություն է հարկավոր իր տնտեսության զարգացման համար, այլապես արտոնն համար անհրաժեշտ էներգիան կեսխսվի ներքին պատակման վրա, որը սպառնալիք է հայոց պետականության համար:

Մեծ հույսեր ունեմ, որ Հայաստանի քաղաքական գործիչները, իշխանությունը եւ ընդդիմությունը, գիտակցելով հայոց պետության առջեւ ծառացած անչափ բարդ հիմնահարցերը, կդեկավարվեն առաջին հերթին համազգային շահերով, դրանց սատարելով խմբային շահերը:

«Իզվեստիա», 10.07.2008

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեջ է արդի
Գլխավոր եւ հիմնադիր
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 582663
e-mail: azg@azg.am
azg2@armenia.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ՀԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐԳԵՎ ՅԱԿՈԲՅԱՆ / հեռ. 529221
Հասցեագրային (գրասենյակ) / հեռ. 582960
Լրագրողական սենյակ / հեռ. 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ. 582483
Հեռագրագրային ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարական ծառայություն
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական եւ մասնակի արտադրումները տպագիր մամուլի մեջ թոյլատրվում կամ ռադիոհեռարձակման միջոցով խմբագրության գրաւոր համաձայնության խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տարով յաղորդագրերը գրաքննային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Թուրքական մամուլը արձագանքում է նախագահ Սարգսյանի հոդվածին

Քաջ գիտակցելով, որ մի բան է հանձնաժողովի մասին արտահայտվել հայ համայնքի առջև, բոլորովին այլ բան «Ուղղ սրտիթ ջոռնլում»

Թուրքական թերթերը ուշի-ուշով հետեւում են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայ-թուրքական հարաբերություններին առնչվող հայտարարություններին: Նաեւ նախ արձագանքեցին նախագահի հունիսի 23-ին Մոսկվայում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանն ունեցած ելույթին, առա Ասանայում Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլի հետ նրա կարճատեւ զրույցին: Այնուհետեւ թուրքական մամուլի ուշադրության կենտրոնում հայտնվեց «Ուղղ սրտիթ ջոռնլի» հուլիսի 9-ի համարում «Մենք պատրաստ ենք խոսել Թուրքիայի հետ» վերնագրով հրապարակված Սերժ Սարգսյանի հոդվածը:

«Ուղղ սրտիթ ջոռնլը» խոսափողի դեր է կատարում «Նոր պահպանողականների» համար, իսկ վերջիններս վերահսկում են պատմական Վաշինգտոնի գործունեությունը: Այսինքն, այս հանդեսում հոդվածները պատահական չեն հրապարակվում: Դրա համար, ըստ երեւույթին, անհրաժեշտ է, որ հոդվածի բովանդակությունն արժանանա նաեւ Վաշինգտոնի հավանությանը:

Այս հանգամանքը, ինչ խոսք, գաղտնի չի կարող լինել թուրքերի համար: Այդ իսկ պատճառով էլ ՀՀ նախագահի «Ուղղ սրտիթ ջոռնլում» հրապարակված հոդվածին թուրքական կենտրոնական թերթերը առանձնահատուկ նշանակություն են տալիս: Թերեւս այդ նշանակությունն է պատճառը, որ «Ռադիկալը» ՀՀ նախագահի հոդվածը թարգմանաբար հուլիսի 10-ի համարում՝ հրապարակման հաջորդ օրը, մասնակի կրճատումներով ներկայացրել է թուրք ընթերցողի ուշադրությանը:

Նույն օրվա համարներում Սերժ Սարգսյանի հոդվածին են անդրադարձել կառավարամետ «Ենի շաֆակ» ու «Վաթանը», իսկ հուլիսի 11-ին, «Սաբահի» գլխավորությամբ, նաեւ այլ թերթեր:

ՀՀ նախագահի հոդվածին արձագանքելու պարագայում թուրքական թերթերին հատկապես հետաքրքրում է հանձնաժողովի ձեւավորումը վերաբերող հատվածը: Ակնհայտ է, որ մի բան է հանձնաժողով ձեւավորելու մասին արտահայտվել Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը, բոլորովին այլ բան պատասխանական Վաշինգտոնի գործունեությունը վերահսկող «Նոր պահպանողականների» խոսափող «Ուղղ սրտիթ ջոռնլի» էջերում:

Ամենայն հավանականությամբ, հոդվածում ընդգծելով, թե «բնականոն հաղթական հարաբերությունների ստեղծումը մեզ հնարավորություն կտա ձեւավորելու հանձնաժողով՝ ճնշելու Հայաստանին ու Թուրքիային վերաբերող բոլոր խրթին հարցերը», Սերժ Սարգսյանը նկատի է ունեցել միջկառավարական հանձնաժողովի ձեւավորումը, այլ ոչ թե պատմաբանների:

Ի դեմ, 2005-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի «Հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողով ստեղծելու» առաջարկին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատասխանել էր «միջկառավարական հանձնաժողով ստեղծելու» առաջարկով, իհարկե, երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո:

Միջկառավարական հանձնաժողովի ստեղծման դեպքում կողմերը կկնարկեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը, թուրքական ժխտողականության դիրքերի սպառումը, կամ որպես փոխվստահության վերականգնման միջոց Ցեղասպանության հետեւանքների վերացումը: Քանի որ սրանք ոչ թե պատմական, այլ քաղաքական խնդիրներ են, ուստի հնարկումները կասկածի տակ չեն դնի Հայոց ցեղասպանության փաստը: Այսպիսով, ի չիք կդառնան Ցեղասպանությունը վիճարկման ոլորտ ներքաշելու փորձերը:

Կարելի է ստեղծել նաեւ պատմաբանների հանձնաժողով, եթե հայ եւ թուրք գիտնականները համատեղ հնարկեն հետեւյալ հարցը. «Ինչո՞ւ Օսմանյան կայսրությունը որպես «Հայկական հարցի» լուծման միջոց նախընտրեց կիրառել հայ ժողովրդի բնաջնջման տարբերակը, երբ այլ տարբերակի կիրառումը նրան տալիս էր Հայոց ցեղասպանության պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն»:

ՀՐԱՆՏ ՉԱՔԱՐՅԱՆ

Թոմաս Համարբերգը գալիս է Հայաստան

1-ին էջից

Ինչո՞վ է զբաղվում եթս մարդու իրավունքների հանձնակատարը

Եթս մարդու իրավունքների հանձնակատարի պատասխանը սահմանվել է 1999-ի մայիսի 7-ին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում կայացած Եթս նախարարների կոմիտեի (ԵԽՆԿ) 104-րդ նստաշրջանի բանաձեւի համաձայն:

Սահմանված են հանձնակատարի գործունեության հիմնական ուղղությունները: Դրանք են՝ աջակցություն մարդու իրավունքների ոլորտում անդամ պետություններում տեղեկատվական գործունեությանը, աջակցություն Եթս փաստաթղթերի ողջ ծավալով մարդու իրավունքների արդյունավետ կիրառմանն ու գործնական իրականացմանը, խորհրդատվական ու տեղեկատվական ծառայություններ՝ մարդու իրավունքների ու դրանց խախտումները կանխելու հարցերով, համագործակցություն Եթս երկրներում մարդու իրավունքների հարցերով զբաղվող հասարակական կառույցների հետ եւ օժանդակություն նրանց ձեւավորման գործում, աջակցություն մարդու իրավունքների ազգային պատասխանների (լիազորների) գործունեությանը, Եթս անդամ պետությունների ազգային օրենսդրության մեջ ու օրինակիրառական պրակտիկայում Եթս չափանիշներին անհամապատասխանության հայտնաբերում ու օգնություն դա վերացնելու նպատակով, համագործակցության միջազգային հաստատությունների հետ՝ մարդու իրավունքների պահպանման ու պատասխանությանն աջակցելու գործում:

1999-ի Բուդապեշտյան բանաձեւի համաձայն, հանձնակատարն իր կարգավիճակով ոչ դատական ատյան է ու չի զբաղվում առանձին անհատների բողոքների քննությամբ: Նա իր գործառույթներն իրականացնում է անկախ ու անաչառ:

Հանձնակատարն ամենամյա զեկուցումներ է ներկայացնում ԵԽՆԿ-ին ու ԵԽԽՎ-ին: Նա պատասխանում է այդ երկու ատյանների հարցումներին՝ անդամ պետություններում մարդու իրավունքների ոլորտում Եթս չափանիշները հարգելու վերաբերյալ: Մարդու իրավունքների հարցերով նրան իրավունք է վերապահված անմիջապես դիմել անդամ պետությունների կառավարություններին:

Հանձնակատարն ինքնուրույն է որոշում Եթս այս կամ այն երկրի նկատմամբ իր գործունեության առաջնային ուղղությունները: Կատարած այցերով նա հաստատություններ է ներկայացնում մարդու իրավունքների վիճակի մասին:

Հանձնակատարն ընտրվում է ԵԽԽՎ-ի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ ԵԽՆԿ-ի ներկայացրած 3 թեկնածուներից: Նա այդ պատասխանը վարում է 6 տարի, առանց վերընտրվելու իրավունքի: Ինչպես եւ Եթս մյուս հիմնական ատյաններինը, այս պատասխանի նստավայրը Ստրասբուրգն է (Ֆրանսիա):

Եթս մարդու իրավունքների առաջին հանձնակատար է եղել իտալացի Ալվարո Հիլ-Ռոբլեսը (2000-06 թթ.): 2005-ի հոկտեմբերին այս պատասխանում ընտրվել է զվեդ Թոմաս Համարբերգը, որն իր պարտականությունների կատարումն սկսելու է 2006-ի ապրիլի 1-ին:

Թոմաս Համարբերգ. կենսագրական տվյալներ

Թ. Համարբերգը 66 տարեկան է: 1969-ին ավարտել է Ստոկհոլմի տնտեսագիտության դպրոցը: Մինչեւ 1980 թ. զբաղվել է լրագրությամբ: 1970 թթ.-ից սկսել է համագործակցել իրավապատասխան միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, նախ եւ առաջ «Միջազգային համաներման» հետ, 1980-86 թթ. եղել է դրա գլխավոր քարտուղարը:

1982-92 թթ. եղել է «Փրկեցեք երեխաներին» միջազգային կազմակերպության Շվեդիայի մասնաճյուղի գլխավոր քարտուղար: Երկար տարիներ աշխատել է ՄԱԿ-ի համակարգում, 1991-97 թթ. անդամակցել է ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեին, ղեկավարել երեխաների վրա ազդեցություն ունենալու հարցերով ՄԱԿ-ի տեխնիկական կոմիտեն, 1996-2000 թթ.՝ Կամբոջայում մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ, 1999-2000 թթ.՝ ՄԱԿ-ի երեխաների հարցերով հատուկ նստաշրջանում Շվեդիայի վարչապետի անձնական ներկայացուցիչ: 2001-05 թթ.՝ մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի՝ Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի ու Կովկասի տարածաշրջանային խորհրդական: 2002 թ. ղեկավարել է Ուլոֆ Պալմեի միջազգային կենտրոնը:

Տիրապետում է անգլերենի, նվազ չափով՝ գերմաներենի ու ֆրանսերենի: Ամուսնացած է, ունի աղջկա:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

«Ժառանգության» համագումարից դեռ ջրերը չդարձվեցին

1-ին էջից

Վերջինս նշեց այն մեծ ավանդը, որ «Ժառանգություն» կուսակցությունը ներդրեց համաժողովրդական շարժման մեջ: Իսկ նախընտրական դաշտերում առանց «Ժառանգության» նպաստի արդյունքներն առավել համեստ կլինեին ըստ նրա: Կարեկցեց «Ժառանգության» խորհրդարանական խմբակցությանը, որ սիրված է աշխատել, իր խոսքով, «ժողովրդի կամքի արտահայտության հետ ոչ մի կապ չունեցող, մեծամասամբ կրթինալ տարերից կազմված խորհրդարանում»: Կարեկցանք հայտնեց նաեւ նորանշանակ վարչապետին. «Շատ ծանր ժառանգություն է ստացել, եւ առաջին հերթին վստահ եմ գիտակցում եք (Տ. Սարգսյանին դիմելով), որ նախ եւ առաջ Ձեր պարտքն է մաքրել կառավարության ավգյան ախոռները, ամենայն անկեղծությամբ եմ ասում՝ վարչապետը լինելով որոֆեսիոնալ, լուրջ տնտեսագետ, հասկանում է այս խնդիրները, որովհետեւ ես անում, Տիգրան, ես ասում եմ այն, ինչ իրականությունն է, ինչ ես պատկերացնում եմ, Դուք շատ անելիք ունեք նախ եւ առաջ Ձեր կառավարած ինստիտուտի ներսում», ահա այսպես խոսեց՝ համարյա բարեկամաբար դիմելով վարչապետին:

Հետո կրկին վերադարձավ «Ժառանգությանը» եւ համաժողովրդական շարժման խոսափող անվանեց խորհրդարանում եւ այդ առումով նրա դերը չափազանց մեծ գնավ: Իսկ Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովում «Ժառանգության» միայնակ ներկայացուցիչն, ըստ Տեր-Պետրոսյանի, փորձում էր պայքարել այդ քայլակրաեական պարտության դեմ, կառավարությունների ներկայացուցիչ պատվիրակությունների մեջ մեկ-երկու ընդդիմադիր պատվիրակը չեն կարող վիճակ փոխել. այնպես որ Տեր-Պետրոսյանը հասկանում է Ռ. Հովհաննիսյանի՝ այդ այլանում աշխատանքը ժամանակավորապես առկախելու քայլը:

Իր տարբ ձեւավորված նախընտրական դաշինքն այսօր արդեն անհարմարություն համարելով եւ նոր քաղաքական միավորի ձեւավորման անհրաժեշտությունից խոսելով՝ նա հույս հայտնեց, որ «ժառանգությունը» լինելու է նոր ձեւավորվելիք Ազգային կոնգրեսի հենասյուներից մեկը:

Ըստ նրա՝ Հայաստանում այնպիսի քաղաքական իրավիճակ է, որ ոչ մի քաղաքական կուսակցություն առանձին վերցրած «չի կարող հաղթահարել այն չարիքը, որ այսօր Հայաստանում գոյություն ունի»: Նրա կարծիքով՝ 88-ի շարժումը պարզունակ բովանդակություն ունեցող շարժում էր՝ «Պարաբաղը մերն է, միացում եւ վերջ, հասարակության զարգացման մասին պատելու խնդիր չկար», իսկ նոր շարժումը հասարակության հասունացման արտահայտություն անվանեց:

Սակայն «Ժառանգության» համագումարի ընդունած բանաձեւում կոնգրեսին միանալու կամ մաս կազմելու վերաբերյալ հստակություն չտրեաց. համագումարն ընդամենը հանձնարարեց նոր ընտրված վարչությանը՝ բանակցություններ եւ խորհրդակցություններ մի քանի ամսվա ընթացքում՝ հարցերի շրջանակն ու գործակցության ոլորտները: Բանաձեւում նորություն էլ կար՝ կուսակցության խորհրդին լիազորեց Ազգային ժողովի ատյանների կուսակցության հետագա մասնակցության նպատակահարմարության հարցը քննարկել (խոսքը 2009 թվականի մասին է), բայց մինչ այդ, երեւում է, կուսակցությունն ամբողջ թափով է խորհրդարանական աշխատանք ծավալելու, քանի որ այս աշնանային նստաշրջանին ներկայացնելու է երկրում բազմակողմանի բարեփոխումների փաթեթ, այդպիսով իր վերակրկնած ուղեգծին հավատարիմ մասնակցելու է բոլոր քաղաքական գործընթացներին, քաղաքական պայքարի օրենքով թույլատրելի բոլոր ձեւերին:

Ռաֆֆի Հովհաննիսյանի ելույթը շատ ընդգրկուն էր, անդրադառնալով մի քանի առանձին տեսադրումներ՝ սկսելով մարտի 1-ի իրադարձություններին նրա անդրադարձից. այս իրադարձությունները Հովհաննիսյանն անվանեց ոճագործություն ազգի դեմ եւ առանց այդ ոճագործության մեղավորների բացահայտման անհնար համարեց խոսել այս վիճակի լուծումների մասին: Հայը կրակեց հայի վրա, 10 հայորդի զոհվեց, «Ազատության» հրապարակում իրականացվեց անազատության օրերացիան, այսպիսի որակումներ հնչեցին:

Մարտի 1-ի իրադարձությունները լիովին բացահայտելու եւ դրանից հետո միայն առաջ շարժվելու խնդիրն առաջնային դիտելով՝ Ռ. Հովհաննիսյանը նախ զարմացավ, թե ինչպե՞ս կարելի է վստահել մարտի 1-ի իրադարձությունների մեղսակից Ազգային ժողովին ու նրա ժամանակավոր հանձնաժողովին անաչառ քննությունը, եթե «ժառանգության» առաջարկած լիազորությունները չեն տրվել այդ հանձնաժողովին, նրա կազմում չեն ընդգրկվել ձերբակալված պատգամավորներից երկուսը, որի դեմքով միայն այդ հանձնաժողովը գուցե իսկապես կարողանար անկախ հետաքննություն իրականացնել: Միաժամանակ նրա աշխատանքից շատ բան կախված համարեց, այդ հանձնաժողովը պետք է կարողանա հավատի բոլոր կվանքերին, անգամ անհրաժեշտություն համարեց իրադարձությունները բացահայտելու գործում Հայաստանի առաջին, երկրորդ եւ ներկա նախագահներին, ինչպես նաեւ Ռ. Քոչարյանի անվտանգության ծառայության պետին լսելը:

Իրավիճակի ելքը Ռաֆֆի Հովհաննիսյանը շարունակում է համարել արտահերթ ընտրությունները, իսկ «ժառանգությունը միտված է լինելու համակարգային բարեփոխումների՝ իր ողջ ներուժով:

Իր ելույթի վերջում բնորոշելով «ժառանգությանը», նրա առաջնորդն անվանեց մեկ անձի առանցքի վրա չկառուցված, ժողովրդավարական, համազգային, քաղաքացիական եւ չարենցյան բնորոշմամբ՝ հավասարակշիռ ուժ:

Օրվա վերջում հայտնի դարձավ, որ «ժառանգության» վարչության նախագահ է ընտրվել Անահիտ Բախչյանը, իսկ Ռաֆֆի Հովհաննիսյանը վարչության անդամ է եւ մնում է խորհրդարանական խմբակցության ղեկավար:

Այդպիսով սպասվող թեմ աշնանը «ժառանգության» ղեկավարության ծանրությունը կուսակցության տղամարդիկ դրեցին կին կուսակցականի ուսերին:

«Ոսկե ծիրանի» իտալացի նշանավոր հյուրերը

Հուլիսի 13-ին մեկնարկող «Ոսկե ծիրան» կինոփառատոնի, թերևս լավագույն միջոցառումներից կարելի է համարել իտալացի նշանավոր ռեժիսոր Միհելանջելո Անտոնիոնիի ֆիլմերի ցուցադրությունն ու նրա հիշատակին նվիրված ցերեկույթները:

Փառատոնի օրերին կցուցադրվի «Միհելանջելոյի հետ», «Գիշեր» «Ամոթից այն կողմ», «Կարմիր անապատը» եւ այլ բազմաթիվ ֆիլմեր, որոնք բացահայտում են Անտոնիոնի ավետագետ-մտավորականի ամբողջական էությունը:

Երեկ «Երեւան» հյուրանոցում Միհելանջելո Անտոնիոնիի հետ կապված բազմաթիվ հուշեր ու հիշողություններ պատմեցին ռեժիսորի կինը՝ էնրիկան, Անտոնիոնի ֆոնդի տնօրեն Կլաուդիո Գաբրիելեն եւ լուսանկարիչ, Անտոնիոնիի լուսանկարների հեղինակ Պիերո Մասիլին: «Տարիներ առաջ ֆիլմ նկարահանելու նպատակով Անտոնիոնին եկել էր Հայաստան, սակայն այդպես էլ վայր չընտրեց եւ խոստացավ վերադառնալ: Ցավոք, երկրորդ հանդիպումը չստացվեց: Մեծ հանճարը կյանից հեռացավ: Անտոնիոնիի հիշողությունները, Տոնինո Գուերայի միջնորդությունն ու Հայաստանը տեսնելու ցանկությունը էնրիկային՝ ռեժիսորի այրուն բերել են Երեւան, որ ամռանը մահից հետո որեւէ փառատոնի կամ մրցանակաբաշխության չէր մասնակցել եւ սա, թերեւս առաջին դեմքերից է, որ օտար վայրում ներկայացնում է իտալացի վարպետին», ասաց «Ոսկե ծիրան» կինոփառատոնի նախագահ Հարությունյանը:

Էնրիկան 18 տարեկան էր, երբ հանդիպեց Անտոնիոնիին, տեսել էր ռեժիսորի նկարահանած ընդամենը երկու ֆիլմ; Հեռագայում փորձիկ դերով նկարահանվեց «Ամոթից այն կողմ» սեղծագործությունում, դարձավ նրա բազմաթիվ ֆիլմերի մոդելուհին ու համառեժիսորը: «Շատ ուրախ եմ, որ Հայաստան եմ այցելել: Միհելանջելոն հաճախ էր խոսում ձեր երկրի, հարուստ մշակույթի մասին: Միհելանջելոյի ֆիլմերն առանձնանում են երիտասարդական շնչով ու մտքի պայթառությամբ: Այսօր ամբողջ աշխարհում մահվան տարելիցի կապակցությամբ շատերն են ցանկանում նրա ֆիլմերի ռետրոսպեկտիվան ցուցադրել: Երջանիկ եմ, որ նոր սերունդը հաճույքով է դիտում Անտոնիոնիի ֆիլմերը: Ժամանակի ընթացքում նրա հանդիսատեսը բազմանում է եւ Անտոնիոնին ֆիլմերի շնորհիվ փոխանցում է իր ցանկություններն ու ձգտումները», ասաց էնրիկա Անտոնիոնին:

Հուլիսի 13-ին Ազգային պատկերասրահում կբացվի Անտոնիոնիի գեղանկարների ցուցահանդեսը, նաեւ վարպետի լուսանկարների ցուցադրությունը, որոնց հեղինակն է լուսանկարիչ Պիերո Մասիլին:

«18 տարեկան էի, երբ Անտոնիոնիի «Բլոու ափ» ֆիլմը դիտելուց հետո հագնվեցի հերոսի պես եւ երազում էի դառնալ լուսանկարիչ: Միլանում էի, երբ բարում հարբած ճարմանացուց վերցրի լուսանկարչական սարքն ու իմ երազանքի մի մասն իրականացավ: Տարիներ անց Հռոմի անհատական ցուցահանդեսի ժամանակ իտալացի ռեժիսոր Մայկո Ֆրեյնին հետ հանդիպեցի Անտոնիոնիին: Երկու օր անց Միհելանջելոն ինձ հրավիրեց ընթրիքի եւ լուսանկարչական աշխատանքի հրավեր ստացա: Եվ մենք ընկերացանք», հիշում է Պիերո Մասիլին:

Անտոնիոնին մտավորական էր, փիլիսոփա, նկարիչ: Կյանքի վերջին տարիներին հաճախ էր նկարում, սիրում էր գույները: Էնրիկան հիշում է, որ նկարներով էլ էր բացահայտում մարդու ներաշխարհն ու էությունը: Հուլիսի 13-ին՝ փառատոնի բացման արարողության ժամանակ Եվրոպական կինոակադեմիայի նախագահ Վիմ Վենդերսը հետմահու Պաստվո մրցանակ կհանձնի Անտոնիոնիին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անհատական հաջողություններ, որ կիսվում են հայրենիքի հետ

Երեւանում է սկսվել Սվետլանա Հովհաննիսյանի մասնագիտական ուղին եւ նրանցել կյանքի հետ՝ շարունակվելով Միացյալ Նահանգներում: Այնտեղ էլ ամբողջացել են ջութակահար, ալտահարի նկարագիրն ու կրթությունը: 16 տարին Միացյալ Նահանգներում փորձել ու հաջողել է ամրել հնարավորինս արդյունավետ ու առաջընթացի գործնական ձգտումով: «Հնարավորությունների ու աշխատասիրությունը վարձատրող երկիր է: Շնորհի առկայության դեպքում սատարող երկիր է: Իմ դեպքում էլ այդպես եղավ՝ Նյու Յորքում ապրած 5 տարիները եղան խիստ գրաֆիկի, ոյժերի ու հաստատակամության տարիներ: Ստոնի Բրուք համալսարանում սովորելու երկրորդ տարում, որը նաեւ ինձ համար վերջինը եղավ: Ընտրի առնելով դժվարություններս, համալսարանը հոժարակամ հանձն առավ ուսումնառությանս ծախսերը: Բայց էմիգրանտ ես ու ոյժի մի հանի անգամ լավը լինես ո գործում բնիկից, իսկ երբ ընդունեցին, որ կարող ես՝ պատրաստ ես լսել ու հետեւել դեպ», - պատմեց Սվետլանա Հովհաննիսյանը: Մինչ օրս էլ վերոնշյալ համալսարանի ուսանողներին ներկայացվում է հայտնի օրինակը՝ երկու երեխա ունենալով, երկու գործիքի՝ ջութակ, ալտ հնգամյա ուսումնառությունը տեւեցավ երկու տարի:

Բացի անհատական արժանիքներից, աշխատասիրությունից, ամենօրյա երկամյա պատարագումներից, որ ոգեւորություն են պարգեւում երաժիշտ-կատարողին, Սվետլանա Հովհաննիսյանն իր հաջողությունների հիմքը բացատրում է Հայաստանում ստացած մասնագիտական հիմնավոր կրթությամբ, որ սկսվել է 6 տարեկանում Ցայկովսկու անվան երաժշտական դպրոցում պրոֆեսոր Հենրիկ Սմբատյանի դասարանում, շարունակվել՝ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, այնուհետեւ ասպիրանտուրայում: «Նահանգներ գնալիս մեր ամենամեծ եւ իմ կարիքները բարձրագույն կրթության կարիք դիտվումներն էին եւ դասավանդելու փորձը: Դրան էլ գումարեցին այդ ուղղության պակասը՝ մեր կրթությունը հասցնելով գիտական կոչման մակարդակի եւ բնականաբար ու գործունեությունն ընտրելու ազատությունը», - ուրախությամբ փաստեց Սվետլանա Հովհաննիսյանը, ինչի որ Կալիֆորնիայի նահանգում իր տունը Դիլիջանը ամեմատ հիշեցնող վայրում է, ինչը Հայաստանի զգացողություն է ստեղծում:

Սակայն ունեցած նշյալ ազատությունը Սվետլանայի համար մի բան կարեւոր խնդիր էլ է յուծում՝ ամեն տարի Հայաստան այցելել նաեւ որպես երաժիշտ. «Բարեբախտություն է օդ վաղ առավոտյան սկսելն Առարատի հետ հաղորդակցվելով: Եթե ինձ էլ ասելիք չունես, ապա նրա ասելիքը կա ու պետք է միայն լսել ուզենաս: Երբ նախկինում հայրենադարձները հոգն էին համբուրում, չափազանցություն էի համարում, բայց հետոից բան ավելի գնահատելի է դառնում գանձդ ու գնահատականդ էլ սուբյեկտիվություն ավելի փիչ է պարունակում»:

Բացի ասվածից, Սվետլանա Հովհաննիսյանը բան է կարեւորում Հայաստան յուրաքանչյուր այցին նոր համերգային ծրագրով հանդես գալը, հակառակ, որ ամեն համերգային ծրագիր ողջ տարին խմորվում է երաժշտի մտքում, ներաշխարհում ամբողջանում կատարմամբ ու ներկայացվում հայրենիքում. «Հայկական երաժշտությունը, հայ կոմպոզիտորների գործերը իմ նվագացանկում մշտական ներկայություն ունեն եւ դրանց կատարման համար հատուկ պատրաստվելս խնդիր չի լինում՝ մոր կաթի հետ ներարկված է, բան հարազատ է, բայց եթե դրանում կատարում են նոստալգիկ երանգով, ապա Հայաստանում՝ ամբողջական նվիրումով ու ոգեւորությամբ. ունկնդրին էլ այդ երաժշտությունը հարազատ է, մինչդեռ դրսում հաճելի, տրավորիչ էկզոտիկա է ընկալվում»: Հուլիսի 3-ին Կամերային երաժշտության տանը տեղի ունեցած համերգում, որը նվիրված էր Գեորգի Թալալյանի հիշատակին, հայ երաժիշտների գործերը (Թ.Ալթունյան «Բերդ», Կոմիտաս՝ «Ախ մառալ ջան», ժողովրդական «Ջոչարի») Սվետլանա Հովհաննիսյանի եւ մյուս երաժիշտների կատարմամբ հենց այդ կերպ հնչեցին:

Համերգի առաջին մասում կատարվեցին Պիացոլայի 4 սանգոներ, որոնց նոտաները երաժիշտ-կատարողը բերել է՝ թողնելու նոթատակով. «Սա էլ իմ մշտական մոտեցումն է, ամեն համերգին բերել այն երաժշտությունների նոտագրությունը, որոնք Հայաստանում դժվար հայթայթելի են: Եկող տարվա համերգը, որի ծրագիրն արդեն մշտում եմ, անակնկալ կունենա՝ կներկայացնեմ ամերիկացի ժամանակակից ստեղծագործողների երաժշտություն, որն անկասկած արժեք է: Նրանց ով լինելը չհարարակեմ՝ անակնկալը այդ-

պիսին թողնելու համար»: Սա խիստ անհրաժեշտ է համարում Սվետլանա Հովհաննիսյանը, որը ԱՄՆ-ում ուսանելու տարիներին սացել է հայաստանյան կրթահամակարգի թերությունների ապացույցներն էլ. «Հիմնականում սահմանափակվում է դասականության ուսուցման ուղեգիծը եւ կրթում է մենակատարներ, մինչդեռ երաժշտի համար խիստ կարեւոր է թիմային մտածողությունը նույնպես: Այդ կրթահամակարգն է իմ հաջողությունների հիմքերն ապահովել եւ հենց դա է պատճառը, որ բացթողումները հուզում են ինձ»:

Ջութակահար, ալտահար, երաժշտական գիտությունների դոկտոր Սվետլանա Հովհաննիսյանի Հայաստան այս տարվա այցի ծրագրերն իրականացված են, ժամկետն ավարտված եւ առջեւում են ամենօրյա պարտավորությունները՝ դասավանդումը, համերգները եւ նոր մտահղացումները Միացյալ Նահանգներում: Ու կրկին հաջողելն ունկնդրի հիացմունքին ու ծաղիկների ծովերի արժանացող համերգները, որոնք երաժիշտ-կատարողը համարում է մեծագույն պարգեւ ու հաջող էլի ոգեշնչման աղբյուր եւ որի կարիքը մշտապես ունի:

ՆԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

Արցախը առանձնահատուկ ջերմությամբ ընդունեց գրողներին

Հայոց ուժի եւ տոկունության չափանիշ Շուշին գրողների 4-րդ համահայկական համաժողովի մասնակիցներին Քարին Տակի ճամփաբաժանին աղուհացով, թթու օղիով, դիոլզուռնայով դիմավորեց: Շուշիի մշակույթի պալատում շարունակվեցին համաժողովի աշխատանքները Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի ողջույնի խոսքից հետո: Գրող-հրապարակախոս Զորի Բալայանը ներկաներին հետաքրքիր դրվագներ պատմեց Շուշիի ազատագրման պատմությունից եւ փաստեց, որ Շուշին հայության համար ավելին է, քան քաղաք, ժամանակին եղել է մշակույթի կենտրոն իր բազմահազար հայ բնակչությամբ, յոթ եկեղեցիներով, երեք թատրոններով, 18 թերթերով, պետք է դառնա այդպիսին, եւ դեռ զարգանա: Արդեն մեկնվել է 20 մլրդ դրամ ներդրում պահանջող Շուշիի գլխավոր հատակագիծը, որի իրականացումը պահանջում է բոլորիս հոգածությունը: ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանի ելույթին հաջորդեցին հայ գրողների ստեղծագործությունների ընթերկումն ու ներկայացումը: Համաժողովի մասնակիցներին ներկայացվեց նաեւ համերգային ծրագիր: Գրողները այցելեցին նաեւ Գանձասար ու մասնակցեցին տեղունական աղոթքին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Շուշի

Հայկական խաչին նվիրված ցուցահանդես Գերմանիայում

«Աուգսբուրգեր ալգեմայնե» տեղեկացնում է, որ բավարական Մինդելհայմում հինգշաբթի՝ հուլիսի 10-ին ժամը 19-ին բացվող Հայաստանի հիսունեությանն ու հայկական խաչին նվիրված ցուցահանդեսը տեւելու է մինչեւ հուլիսի 20-ը:

Հայաստանից հրավիրված Վանո Դաղոյանն ու երկու ուրիշ աղվեսագետներ կներկայացնեն խաչի՝ ինչպես անտիկ ժամանակների, այնպես էլ ժամանակակից արվեստի նմուշներ, որոնց մեջ զգալի տեղ է հատկացված հայաստանցի երեխաների ձեռքով պատրաստված օրինակներին: Վանո Դաղոյանը, որ մաքեմատիկա եւ արվեստ է ուսանել, այժմ աշխատում է երեխաների հետ, նրանց ծանոթացնում իրենց մշակութային արմատներին: Ցուցահանդեսի վաճառից գոյացած գումարը կտրվի Հայաստանի հաշմանդամ երեխաներին:

Հոդվածում լայնորեն ներկայացված է Հայաստանի հիսունեացման պատմությունը: Իսկ խաչի մասին ընդգծված է՝ հայկական խաչի վրա տառապած Քրիստոսը չկա, աբստրակտ խորհրդանիշը ուրախությունն ու հիսուսի հաղթանակն է տեսնում:

VDKD-ի մրցանակ սաքսոֆոնահար Կորյուն Ասատրյանին

Գերմանական համերգային տնօրենությունների միությունը (VDKD) 2008-ի մրցանակակիր է ճանաչել 22-ամյա սաքսոֆոնահար Կորյուն Ասատրյանին: 10 000 եվրո արժողության մրցանակը նրան կհանձնվի սեպտեմբերի 15-ին Նյուրնբերգում, հուլիսի 10-ին Մյունխենում հայտարարել է հիշյալ միությունը:

Ժյուրիի հիմնավորմամբ՝ Կորյուն Ասատրյանը վարպետորեն է տիրապետում սաքսոֆոնին: Նա տեխնիկապես եւ երաժշտականորեն ամենաբարձր մակարդակն է ցույց տալիս: Կիրառելով կատարմամբ բացահայտում է գործիքի հնչյունային հնարավորությունների նոր աշխարհ:

Ասատրյանը ծնվել է 1985-ին, Հայաստանում: 6 տարեկանից հաճախել է դաշնամուրի դասերի, 8 տարեկանից սաքսոֆոն նվագել: Այժմ սովորում է Քյոլնի երաժշտական բարձրագույն դպրոցում:

Գերմանական համերգային տնօրենությունների միությունն իր մրցանակը սահմանել է 2005-ից: 10 000 եվրո մրցանակը հատկացվում է մրցանակակիր՝ Գերմանիայում համերգային գործունեության կազմակերպման ու խրախուսման համար, ինչպես նաեւ ժյուրիի գիտությամբ կարող է ծառայել նաեւ մասնագիտական այլ նպատակների (օրինակ ձայնագրությունների կամ գործիք ձեռք բերելու համար):

Մայիսին 3sat հեռուստաալիքը Կորյուն Ասատրյանի մասին մեծ ֆիլմ էր պատրաստել՝ «Արեւելքը Հայաստանից» վերնագրով:

ԼԻԼԻԹԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

12 ՅՈՒԼԻՍ 2008 ԷՋ Ա

ԱԶԳ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հայաստանում ազգային հեռնքի վրա ստեղծված բնդդիմադիր ուժի պահանջ կա

Արդյոք արհեստական չէ՞ երրորդ ուժի միքը

«Ազգի» մեկնաբաններ Մարիետա Խաչատրյանի եւ Արմեն Մանվելյանի այս երկխոսությունը ինչ-որ հարցերի վերջնական պատասխաններ տալու հավակնություն չունի. ուղղակի երկխոսության ժանրն ավելի լավ է արտացոլում ներհաղաքական դաշտում առկա խնդիրների շրջանակը:

Մ. Խ. - Համաձայն ես այն մտի հետ, որ Հայաստանում բոլորովին նոր, անցյալում երբեմ չկրկնված, երկդիմի, ոչ միանշանակ իրավիճակ է. մի կողմից թվում է՝ նոր նախագահ ունենք, ամեն ինչ հունի մեջ է ընկնում, կարգավորվում, մյուս կողմից էլ Տեր-Պետրոսյանը թեժացնում է իրավիճակը, եւ չի բացառվում ֆորս-մաժորի կրկնությունը: Հայաստանի երկրորդ նախագահի՝ «Մեդիամախին» տված հարցազրույցով էլ կարծես թե վերջինս ի վերջո, տարբեր մամուլային կանխատեսումներից հետո, սահմանազատվում է նաեւ Սերժ Սարգսյանից ու այդմիտով մեծ հաղթականություն վերադառնալու հայտ է ներկայացնում՝ մամուլի նշած սեցենարներից ավելի շուտ, այնուամենայնիվ, գուցե Տեր-Պետրոսյանին պատասխանելու անհրաժեշտությունից դրդված: Եվ ընդհանրապես էլ մեր հաղթական դաշտում ջրախառն ավազի վիճակ է՝ շատերն են դեռ զատորոշվելու շուտով, հակառակ այս կարճատեւ պահի, երբ նրանց մի մասը չգիտե իր անելիքը: Այնպես որ՝ թեժ աշունն իսկապես այս անգամ գուցե իրականություն դառնա:

Ա. Մ. - Համաձայն եմ, որ վիճակը շատ երկակի է, միանշանակ գնահատականներ տալը գոնե առնվազն այս տեսակետ շատ դժվար է: Ռոբերտ Քոչարյանը կմնի՞ հաղթական դաշտ՝ այս պահին դժվարանում եմ ասել, բայց հստակ է մի բան, որ այսօր նոր հաղթական ուժի հստակ պահանջարկ կա: Այդ պահանջարկը կա հասարակության մեջ, հաղթական եւ լոգոդրական շրջանակներում: Երրորդ ուժ ստեղծելու փորձեր միշտ էլ եղել են, հիշենք թեկուզ ընտրությունների ժամանակ Վահան Հովհաննիսյանն էր հայտարարում, որ ինքն է այդ երրորդ ուժը, սակայն այն այդպես էլ չձեւավորվեց եւ չէր էլ կարող Դաշնակցության շուրջը ձեւավորվել: Հնարավոր չէ ասել՝ Ռոբերտ Քոչարյանը ինչ-որ ուժ ինքը կստեղծի, թե կուզենա ինչ-որ հաղթական ուժի սատարել, որը եւ հանդես կգա երրորդ ուժի կարգավիճակով: Սակայն երրորդ ուժ հասկացողությունը կախված է մի հանի խնդիրներից. այստեղ հարցը ոչ միայն պահանջարկին է վերաբերում, այլ՝ թե ո՞վ կլինի այդ ուժը, ինչ գաղափարախոսությամբ, եւ ամենակարեւորը՝ ո՞վ կլինի նրա լիդերը: Ամեն դեպքում մեր հասարակության մեջ շատ մեծ տեղ են տալիս առաջնորդի դերին: Այս հարցերի պատասխանն ունենալուց հետո գուցե կարելի լինի երրորդ ուժի մասին խոսել, որը հնարավոր է իրավիճակի լուծման ինչ-որ ձեւ կլինի:

Մ. Խ. - Մի հիչ էլ մենք լոգոդրները, հաղթական մեկնաբանները մեղավոր չենք, որ հաղթական երկու բեւեռ ստեղծվեց՝ անվերջ ճաղկում էինք աջուձախ, անվերջ ինքնադատում սրան-նրան՝ առագացնելով գործընթացները: Մեր հաղթական դաշտը շատ աղքատ չէր, պարզապես ինչ-որ ուժեր շատ գործոնների ազդեցությամբ հետ քաշվեցին, անգամ բարդույթավորվեցին՝ դաշտը սեւ-սպիտակի վրածելով. այսինքն՝ արհեստականորեն, նաեւ մեր օգնությամբ չստեղծվե՞ց այդ երկու բեւեռը: Թեեւ ժողովուրդն, իրավ, հայացքը սրանից նրան էր ուղղում, սրանից հիասթափվում-նրան ուտեցնում, բայց արդյո՞ք ընդդիմադիր դաշտ, իրոք, այդքան ադեկատ էր: Հիմա էլ արդյո՞ք նույն արհեստականությամբ չենք ստեղծում երրորդ ուժի միքը. նախ միքը, հետո բեւեռը:

Ա. Մ. - Անկեղծ ասած այդ հարցում չեմ կիսում ֆ կարծիքը՝ լոգոդրները նկատեցին այն, ինչ հաղթական դաշտի շատ գործիչներ չէին ցանկանում նկատել: Իմ կարծիքով՝ հասարակական պահանջը կար, մեր ընդդիմադիր դաշտն էլ հարուստ չէր. ընդհանրապես, շատ ադեկատ էր եւ տեսականորեն, եւ մասամբ առումով, ու հասարակության մեջ իսկապես պահանջ կար ուժեղ ընդդիմություն ստեղծելու: Տեր-Պետրոսյանը կարողացավ համախմբել մի մասին, նա հետեւից մի մասը գնաց: Հիմա դա միշտ էր-միշտ չէր՝ հարցի այլ կողմն է, իսկ լոգոդրներն ընդամենը հայելու դեր կատարեցին:

Մ. Խ. - Վերադառնալով երրորդ ուժին՝ նկատեմ, որ դա թեթեւ, ժամանցային խոսակցություն չէ. նախ երրորդ ուժին հավակնող միավորներ կան եւ իշխանական, եւ ընդդիմադիր հատվածում: Մյուս հարցն այն է, թե այդ երրորդ ուժը կհաստատի՞ ստեղծվել, թե կուզենա գործընթացներից, ընդ որում նկատենք՝ Ռոբերտ Քոչարյանին սատարելու կեցվածք էին որդեգրել ժամանակին եւ ընդդիմություն եղած ինչ-ինչ միավորներ, եւ իշխանության մեջ հայտնի եւ ժեատոս նրա կողմին եղած կամ նրա կողմից ստեղծված ուժեր: Սամվել Բաբայանն է այդմիտի բեւեռ ստեղծելու փորձեր անում, մինչդեռ մինչեւ վերջ էլ պարզ չեղավ՝ նա իշխանության երկու առանցքային ֆիգուրներից ո՞ւմ կողմին կանգներ պետք եղած պահին:

Ա. Մ. - Իսկապես երրորդ ուժ ձեւավորելու հավակնորդներ շատ կլինեն, սակայն ֆ նշած թեկնածուներից ոչ մեկն էլ չի կարող այդ երրորդ ուժը դառնալ մի հանի պատճառներով: Պատճառներից մեկն այն է, որ հասարակության մեջ ցանկություն կա որոշ երրորդ ուժ տեսնել այն մարդկանց եւ ուժերին, որոնք այս կամ այն կերպ չեն համագործակցել նախկին կամ ներկա իշխանությունների հետ. երկրորդ՝ այդ նոր ուժը հստակ գաղափարախոսություն պետք է ունենա, չասի՝ ես եկել եմ իշխանություն վերցնելու ամեն գնով: Եւ կրկնեմ՝ կարեւոր է, թե ո՞վ կլինի այդ ուժի լիդերը, որից շատ բան է կախված: Օրինակ, եթե Տեր-Պետրոսյանը չլիներ՝ ընդդիմությունը չէր կարողանա ընտրություններում 20 տոկոս ստանալ:

Մ. Խ.- Ճիշտն ասած երրորդ ուժի մասին որ այդքան խոսում են՝ դա չի կարող միանգամից, կարճ ժամանակում ստեղծվել, տեսական գործընթաց է, այդ պատճառով կարող է հետ մնալ գործընթացներից, որոնք մեզ մոտ կարծես թե ուղղորդվում են ինչ-որ նոր լուծումների:

Չէ, գիտես, դու կարող ես հաղթագիտության օրինաչափություններից խոսել, բայց մեր կյանքը տարբերվում է դասագրքերից, լրիվ ուրիշ դրսեւորումներ ունի, հաճախ՝ մեծամորֆոզային: Մտածելու բան է նաեւ, թե արդյո՞ Սերժ Սարգսյանին հաջողվելո՞ւ է թշնամիները լուծել եւ գնալ առաջ, թե՞, այնուամենայնիվ, նրան խանգարելու են. ոչ միայն ընդդիմության, այլ նաեւ՝ նախագահ Քոչարյանի հայտն էր հետաքրքիր:

Ա. Մ.-Իմ կարծիքով եթե որեւէ բան խանգարելու է Սերժ Սարգսյանին՝ դա ոչ թե Տեր-Պետրոսյանն է լինելու, այլ իր հաղթական թիմ Հանրապետականը, այսինքն՝ ինքը չունի հստակ հաղթական ռեսուրս, որի վրա կարողանա հենվել. Հանրապետական կուսակցությունը, ես հաղթական վերջին զարգացումներին հետեւում եմ, բավականին թույլ է թե կադրով, թե դիրքորոշումներով:

Մ. Խ. - Ես, օրինակ, այդ կարծիքին չեմ. միշտ է, Հանրապետականում այս պահին շատ են պատահական մարդիկ, մականունավորներ եւ պատեհապաշտներ, բայց նաեւ ուժեղ ֆիգուրներ կան, այսինքն՝ միշտ եւ միշտ արտածում է մեր մյուս կուսակցությունների հայկական ֆենոմենը (գործարարներ, զանգված «պոռխադիմեցներ» եւ գաղափարականներ), ուղղակի ուժեղ ֆիգուրների մեծ մասը տարօրինակորեն այս պահին լռում է, այ, դրա մասին գուցե արժե խոսել...

Ա. Մ. - Ոչիր հաղթականության մեջ են ու լռում են՝ դա ինձ համար անհասկանալի է, ամեն դեպքում ներկա պայմանում եւ հաղթական ակտիվության մեջ Տեր-Պետրոսյանի կողմնակիցներն ավելի ակտիվ են:

Մ. Խ.- Չպետք է բացառել նաեւ, որ հենց Ս. Սարգսյանը եւս նոր հաղթական ուժ կարող է ստեղծել՝ ձգտելով հենց այդ ուժով լցնել երրորդ ուժի դատարկ տարածքը: Մյուս կողմից էլ վստահ կարելի է ասել, որ կեղծ ընդդիմություն ստեղծել, ընդդիմության իմիտացիա անել, ինչի ականատեսն անցյալում եղել ենք, այլեւս հնարավոր չէ՝ չի ստացվի...

Ա. Մ. - Անկեղծ ասած՝ չեմ հավատում, որ Ս. Սարգսյանը կարող է իրեն նոր հենարան ստեղծել. առաջին հերթին՝ դա Ս. Սարգսյանի ինչին է պետք, բավականին ֆինանսատար-ծախսատար ձեռնարկ է... Բացի այդ էլ՝ երրորդ ուժը պետք է լինի ընդդիմադիր եւ ներկա իշխանությանը, եւ ներկա առաջատար ընդդիմությանը, որն իր ձեւի մեջ իմ կարծիքով բավականին աղազգային է: Այսինքն՝ պետք է ստեղծվի ազգային հենքի վրա ընդդիմադիր ուժ, որը Հայաստանում իմ կարծիքով չկա:Համամիտ եմ՝ կեղծ ընդդիմության ժամանակներն անցել են. Տեր-Պետրոսյանը եթե ինչ-որ դրական քայլ կատարեց, ապա մարեց Հայաստանի հաղթական դաշտը կեղծ ընդդիմությունից, ուրիշ բան, որ ինքը չի կարող հայկական ազգային ընդդիմություն դառնալ՝ զուտ իր գաղափարական կողմնորոշումներից ելնելով:



Մ. Խ. - Անկախ հաղթական գործիչների խաղերից՝ զանգվածը, որ կանգնած է դրսում, ես բազմիցս գրել եմ այդ մասին, ակնկալում է, որ ինչ-որ մեկը կլուծի իր խնդիրները. ցինիզմով չսառեցնելով եւ նրան (զանգվածին) նույն ծայրահեղական հակակշիռը չտրտելով՝ պետք է նրանց թիմ առաջարկելու հաջությունն ունենալ, նրանց խնդիրների այնպիսի հաղթական լուծումներ առաջարկել, որ Լ.Տեր-Պետրոսյան-գործոնն այլեւս չկարողանա օգտագործել նրանց:

Ա. Մ.- Ես խնդիրն այլ կերպ կդնեմ՝ ամեն դեպքում Տեր-Պետրոսյանն ուժեղ հաղթական գործիչ է եւ լավ կլինի, որ նա շատնակի մնալ հաղթական դաշտում. այսօր Հայաստանում ստեղծվել է մի իրավիճակ, որ ինչ-որ տեղ կարելի կա նաեւ Տեր-Պետրոսյանի, որպիսեւ այլ ընդդիմության բացակայությամբ նրա հեռացումը կարճակի իշխանության ձեռքերը՝ «ինչ ուզում եմ կանեմ» սկզբունքի կիրառման տեսակետից, ինչը կթարդացնի եւ ժողովրդի, եւ իշխանության վիճակը: Մեզ ընդդիմության ակտիվությունը պետք է՝ իշխանությանը սթափ պահելու համար:

Ընդհանուր առմամբ՝ մենք բավականին ուժեղ իշխանություն ունենք, Հայաստանում միշտ էլ իշխող հաղթական համակարգը բավականին ուժեղ է եղել, ինչը ճնշել է եւ հասարակությանը, եւ իշխանությանը:

Մ. Խ. - Ես վարչական ուժը իշխանության ուժեղ լինելու գործոն չեմ համարում. իշխանությունն ուժեղ պետք է լինի ժողովրդի մոտ հարգանք եւ վստահություն վայելելու առումով, այդ առումով պետք է գործոն դառնա:

Ա. Մ. -Բայց արեւմուտքում էլ այդպես է՝ մարդիկ ընտրում են Սարկոզիին, հետո մի տարի հետո պարզվում է, որ Սարկոզիի վարկանիշն ընկել է, կամ Մեծ Բրիտանիայում Բրաունն է գալիս իշխանության՝ հետո պարզվում է, որ նրա ղեկավարած լեյբորիստական կուսակցության վարկանիշն է ընկել: Դա էլ է նորմալ գործընթաց, եւ դրան պետք է չէ նայել որպես իշխանության թուլացման:

Ես գտնում եմ, որ այս պահին ստեղծված հաղթական իրավիճակի ելքերից մեկն այդ նոր՝ երրորդ ուժի ստեղծումն է, որի պահանջարկը կա, այլ բան է՝ ո՞վ կկարողանա ստեղծել, դա հնարավոր է տարիներ տեւի, հնարավոր է՝ ընդամենը կես տարի: ■

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԴԻ ԲԻԶՆԵՍԻ ԼԵԼԵԼԱԿՈՐ ՀԱՅԵՐԸ

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՎԱՅԱՆ

Ռուբեն Լեւոնի Դիզդիշյանը, դժբախտաբար, նյուսնեյթեր չէ, այսինքն՝ մարդ, որը լրատվամիջոցներին երբեք չի մերժում եւ պատրաստակամորեն պատասխանում է բոլոր հարցերին, այդ թվում նաեւ՝ անձնական բնույթի: Հենց այդ պատճառով ընթերցողին հետաքրքրող առնվազն մեկ հարցի ի վիճակի չենք պատասխանելու. այն է՝ ինչ խորհուրդ է պարունակում նրա «Ցենթրալ Փարթներշիփ» (ՑՓԸ) կինոընկերության հայատպակեր-այցեքարտը՝ ամրերը պատելով Արարատ լեռանը մոտեցող արծաթափայլ դիրիժաբլը...

Թերեւս սխալված չենք լինի ասելով, որ Ռ.Դիզդիշյանը Ռուսաստանի ամենահարահայտ հայերից մեկն է, եւ դա առաջին հերթին պայմանավորված է արվեստի ամենազանգվածային տեսակով՝ կինոյով: Իսկ նրա ընկերությունը երկրի կինոարտադրության բացահայտ առաջատարն է, հենց ՑՓԸ-ն էական դերակատարություն ունի ռուսաստանյան կիսամեռ կինոյի վերակենդանացման գործում, եւ դա մեր ազգակցի անգնահատելի ներդրումն է Ռուսաստանի մշակույթում:

Նրա կենսագրությունը կարելի է ամփոփել մեկ պարբերության մեջ. ծնվել է 1959 թ. Կազանում: Ուսանել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում, 1981-ին ավարտել է ճարտարապետաշինարարական ֆակուլտետը ու յոթ տարի աշխատել ըստ մասնագիտության: 1988թ. Երեւանում հիմնել է ճարտարապետաշինարարական նախագծային կոոպերատիվ՝ զուգահեռաբար զբաղվելով համակարգիչների եւ համակարգչային լրամարագների առեւտրով: «Մեծ սուգունի»՝ զանգվածային արտագաղթի ժամանակ, 1991-ին, մեկնել է Մոսկվա ու զբաղվել բիզնեսով: 1996թ. հիմնել է «Ցենթրալ Փարթներշիփ» կինոընկերությունը, որի գլխավոր պրոդյուսերն ու համասեփականատերն է ներկայումս:

Ինչ է իրենից ներկայացնում Ռ. Դիզդիշյանի ընկերությունը եւ ինչո՞վ է նա անձամբ զբաղվում. երկու խոսքով՝ կինո է արտադրում ու վաճառում, նրա մեջ մեկտեղված են արվեստագետն ու ձեռնարկատերը, արվեստն ու բիզնեսը: Բայց այս բառերի տակ թաքնված է տմարդաշատ աշխատանքի ու բարդագույն մի գործընթաց, որի հաջողության գրավականը կինոարվեստի լիակատար ըմբռնումն է, իմանալը, թե ինչ կոդեն միլիոնավոր հանդիսատեսները:

Պրոդյուսերը զվարճանքների ինդուստրիայում այն մարդն է, ով մշակութային արժեք ստեղծելիս ինքն է որոշում որեւէ ստեղծագործություն կյանքի կոչելու նպատակահարմարությունը ու կարգավորում ֆինանսական, վարչական, տեխնոլոգիական, իրավաբանական հարցերը: Գոյություն ունեն ասոցացված, համադրող, կատարող, գեղային պրոդյուսերներ, համապրոդյուսեր, որոնցից յուրաքանչյուրն իրացնում է նախագծի առանձին գործառույթ, իսկ Ռ. Դիզդիշյանը գլխավոր պրոդյուսերն է ու վերահսկում է բոլորին եւ ամենը:

Նրա նորամուծը եղավ 1998-ին, երբ թողարկեց «Վճարում եմ կանխավ» հեռուստաֆիլմը: Մեկ տարի անց հեռուստադիտողի դատին հանձնեց եւս երեք ֆիլմ, որոնցից «Ընթրիք չորս ձեռքով» («Ужин в четыре руки») անվանումը կրողը բերեց առաջին հաջողությունը՝ արժանացավ Ռուսաստանի հեռուստատեսային «ՏԵՖԻ» բարձրագույն մրցանակի, որպես լավագույն հեռուստատեսային գեղարվեստական, խաղարկային ֆիլմ: Այդ հետեւեցին մեկ տասնյակից ավելի ֆիլմեր, որոնցից երեքն են հայերի Հայաստանի հեռուստադիտողին՝ «Ուսուցչուհի», «Հայրենիքը սպասում է», «Մեռյալների գանձերը»: 2003 թ. Ռուսաստանի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի համատեղ արտադրության «Շիֆ» կինոնկարը լայն ճանաչում բերեց Ռ.Դիզդիշյանին. նույն տարում այն արժանացավ «Մոսկովյան պրեմիերա» կինոփառատոնի «Յանդիսատեսի համակրանք» մրցանակի, Տոկիոյի միջազգային կինոփառատոնի ժյուրիի հատուկ մրցանակի՝ նշանակալի գեղարվեստական նվաճման համար, Սոչիի կինոփառատոնի «Գրան պրի» մրցանակի:

Ներկայումս «Ցենթրալ Փարթներշիփին» են պատկանում ավելի քան 3000 ժամ տեւողությամբ 1400 կինոնկարների հեղինակային իրավունքները: Դրանցից Հայաստանի կինոհանդիսատեսին հաջանոթ են այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Անանուն բարձունքին», «Մենամարտ սպերի հետ 1,2», «Դոկտոր Ժիվագո», «Վարպետն ու Մարգարիտան», «Իմ մեծ հայկական հարսանիքը», «Որս ասֆալտի վրա», «Գելխեղդը», «Մեր ժամանակների հերոսը», «Նապաստակն անդունդի եզրին», «Վերջին զրահագնացը»:

Այս ամենն արդյունքների վերաբերյալ չոր թվեր ու փաստեր կարելի է դիտել, սակայն շատ ավելի բարդ ու հետաքրքիր է գործընթացը, որ ղեկավարում է Ռ. Դիզդիշյանը:

Ինչպես հայտնի է, կինոն սկսվում է սցենարից, եւ ՑՓԸ-ն ներկայումս ամսական ստանում է 30-40 գրվածք, որոնք ամեն օր կարդում են ընկերության 200 աշխատակիցներից մեկ տասնյակ խմբագիրներ: Դա ծանրագույն, ծանձրացուցիչ աշխատանք է, որովհետեւ սցենարների բացարձակ մեծամասնությունը, որպես կանոն, կինոդրամատուրգիական խոտան է կամ գրագողություն: Բայց եթե հայտնաբերվում է գեթ մեկ փիչ թե շատ ուշագրավ սցենար կամ թեկուզ 1-2 էջանոց սցենարական հայտ՝ սկսվում է հիրավի տմարդի:

Պարզունակ ձեւակերպմամբ՝ գլխավոր պրոդյուսերը պետք է լուծի մի քանի հիմնախնդիր՝ ինչպիսի «ապրանք» տրամադրել հանդիսատեսին, ռեժիսորներից ու դերասաններից ո՞ւմ հրավիրել, որքան ֆինանսական ներդրում կատարել (արտադրություն, հոնորարներ, գովազդ եւ այլն), ինչ տեսով վաճառել (կինոթատրոններին, հեռուստատեսությանը, թե՞ DVD տարբերակով) եւ այս ամենին ի հետեւանս՝ շահույթ ստանալ: Ինքնին յուրաքանչյուր կինոնկար մեկ նոյատակի շուրջ համախմբված տարբեր խառնվածքներ, նախասիրություններ, ճաշակներ ու հավակնություններ ունեցող մարդկանց կոլեկտիվ վերջնարդյունք է, եւ խոչընդոտները բազում են: Դժվարություններից մեկն այն է, որ ռուսաստանյան կինոյի «զուրբերը»՝ նշանավոր ռեժիսորներն ու դերասանները փոքրի հետեւից չեն վազում, հեղինակությունը նրանց համար ավելի թանկ է, այդ իսկ պատճառով իրենք են ընտրություն կատարում: Բայց անգամ այս պայմաններում Ռ. Դիզդիշյանն իրականացնում է շնորհակալանքի արժանի մեծ առաքելություն՝ ինքնադրսեւորման հնարավորություն է ընձեռում ոչ այնքան հայտնի բազմաթիվ մարդկանց, ովքեր հաջողության դեպքում իրենց խորքն են գրավում կինոաշխարհում:

Իսկ հաջողություններն ակնհայտ են եւ առաջին հերթին՝ ՑՓԸ-ի համար:

2005 թ. նոյեմբերին տեղի ունեցավ խիստ էական, նշանակալի իրադարձություն՝ ՑՓԸ-ի 50% մասնաբաժինը, գումարած մեկ բաժնետոմս, ձեռք բերեց մի

քանի թերթերի ու ռադիոկայանների վերահսկիչ փաթեթներին, ինչպես նաեւ «Սինեմա-պարկ» կինոթատրոնների ցանցին տիրող «Պրոֆ-մեդիա» հոլդինգը: Գործարքի գինը կազմեց շուրջ 50 մլն դոլար, եւ Ռ. Դիզդիշյանը չի հերքում այդ փաստը: Իրադարձության նշանակալիությունը հետեւյալն էր. «Պրոֆ-մեդիան» մաս էր կազմում «Ինտերռոս» հոլդինգի, իսկ վերջինս Ռուսաստանի բիզնես-գիգանտներից է ու վերահսկում է երկրի տնտեսության մի շարք ճյուղեր: «Ինտերռոսի» ակտիվները կենտրոնացած են մեծալուրգիայում ու հանքարդյունաբերությունում («Նորիլսկիյ նիկել», «Պոլյուս-զոլոտո»), վառելիքաէներգետիկ համալիրում («ՌՈՒՍԻԱ-պետրոլեում»), ֆինանսական ոլորտում («Ռոսբանկ», «Սոգլասիե» ապահովագրական ընկերություն, «Ինտերռոս-դոստոյնստվո» ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամ), գյուղատնտեսությունում ու սննդարդյունաբերությունում («Ագրոս» խումբ), բանկարանային-կոմունալ տնտեսությունում («Նովոգոր» ընկերություն), անշարժ գույքի ոլորտում («Բաց ներդրումներ»), իսկ հոլդինգի կառավարման ներքո գտնվող կապիտալը, 2006 թ. սկզբի դրությամբ, կազմում էր 9,4 մլրդ դոլար: Հավելենք նաեւ, որ «Ինտերռոսի» բաժնետոմսերի 100%-ը պատկանում էր «ԿՄ-ինվեստ» ՓԲԸ-ին, որին հավասար մասնաբաժիններով տիրում էին երկու հոչակավոր ռուս օլիգարխներ՝ Ալեքսանդր Պրոխորովը եւ Վլադիմիր Պոտանինը (վերջինս, «Forbes»-ի տվյալներով, 2007 թ. սկզբին 15 մլրդ դոլար անձնական ունեցվածքով Ռուսաստանի ամենահարուստ ձեռնարկատերերի ցանկում զբաղեցրեց 4-րդ հորիզոնականը):

«Ցենթրալ Փարթներշիփի» հետ գործարքը առաջին դեպքերից մեկն էր, երբ ֆինանսական խոշոր ներդրողը մուտք էր գործում կինոբիզնես, ինչն, անկասկած, նպաստելու էր թե Ռ. Դիզդիշյանի ընկերության բուռն առաջընթացին, եւ թե եկամուտ էր բերելու երկուսին:

Արդեն 2007-ին, 2006-ի համեմատությամբ, ընկերության շահույթն ավելացավ 46%-ով եւ կազմեց 156 մլն դոլար, որից 61% ստացվեց հեռուստատեսությունից, 26%՝ կինոցուցադրումից, 9%՝ ընտանեկան վիդեոյից, 4% ՝ այլ աղբյուրներից: 2007-ին ՑՓԸ-ն կինոհանդիսատեսին ներկայացրեց 47 ֆիլմ, դրանցից 16-ը՝ ռուսաստանյան (10-ը սեփական արտադրության), որոնք բերեցին 85 մլն 90 հազ. դոլարի եկամուտ, ինչը նախորդ տարվա համեմատ 154,5% ով ավելի էր: Միայն «Գելխեղդը» ֆիլմի շահույթը կազմեց ավելի քան 20 մլն դոլար: Այս ամենը ՑՓԸ-ին հնարավորություն տվեց կինոցուցադրության ռուսական շուկայում զբաղեցնելու 3-րդ տեղը (առաջինը UPI-ն է, երկրորդը՝ «Կարո պրեմիերը»): Զգալիորեն ավելացավ նաեւ միջազգային վաճառքը՝ 1,5 մլն դոլարից հասնելով 3,5 միլիոնի:

Այս թվերն ու փաստերը լոկ ցուցիչներ են, սակայն խորհրդային իմաստի տեսակետից դրանք ունեն այլ նշանակություն՝ Ռ. Դիզդիշյանն ու նրա ընկերությունը զարգացնում են Ռուսաստանի կինոարվեստը, նպաստում են տարբեր ժանրերի փոխներթափանցմանը եւ համաշխարհային շուկա են հանում ռուսական կինոն, իսկ դա արդեն գաղափարախոսական ու քաղաքական ենթատեքստ ունի:

Ռ. Դիզդիշյանը, բնականաբար, մենակ չի աշխատում, նա ունի ընկերների, համախոհների միաբան խումբ: Նրանցից են ՑՓԸ-ի արտադրական տնօրեն Արամ Մովսիսյանը, «Central Partnership Sales House»-ի գլխավոր տնօրեն, Երեւանի պետհամալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի շրջանավարտ Մարկ Լոլոն, ընկերության միջազգային հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն, ծնունդով երեւանցի եւ Կալիֆորնիայում փայլուն բիզնես-կրթություն ստացած Արմեն Լեւոնի Դիզդիշյանը, պրոդյուսերներ Սերգեյ Դանիելյանը, Յուրի Մորոզը եւ տասնյակ այլք, ովքեր ըստ էության ստեղծել են ռուսաստանյան կինոպրոդյուսերական դպրոց:

Ռուբեն Դիզդիշյանը՝ Ռուսաստանի Պրոդյուսերների գիլդիայի վարչության անդամը, Ֆրանսիայի Գրականության եւ արվեստների շքանշանի ասպետը, ունի վիթխարի հեռանկար ծրագրեր: Բայց մեզ, այդտեղներն, հետաքրքրում է մեկ հարց՝ ինչ խորհուրդ ունի Արարատին մոտեցող արծաթափայլ դիրիժաբլի հայատպակերը: Կհասնի՞ նա Լեռանը... ■

Անցյալի դեմքեր

«Ազգ» օրաթերթի հասարակական-քաղաքական հավելվածը սկսում է ներկայացնել հրապարակումներ 20-րդ դարի սկզբում ռուսական բանակում եւ ապա Կովկասյան ռազմաճակատում մարտնչած հայազգի զորավարների մասին: Շարքի հեղինակն է ազգագրական գիտությունների դոկտոր Մուրադ Կարապետյանը: Առաջին հրապարակումը Հայաստանի առաջին հանրապետության պաշտպանության առաջին նախարար Հովհաննես Հախվերդյանի մասին է:

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԱԶԳԻ ԳԵՂԵՐԱՆՆԵՐ

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ռուսական բանակում ծառայող հայազգի զորավարների փայլուն հմաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի Հախվերդովների (Հախվերդյանների) ծագումով Թիֆլիսի նահանգից տոհմիկ ազնվականների գերդասանը: Նրանցից շատերը հայտնի էին դեռեւս 19-րդ դարի ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմներից: Գեներալ-մայորի կոչում ունեին Վասիլի եւ Յոհաննես Եսայու Հախվերդյանները: Յոհաննես Հախվերդյանը ռուսական բանակի հայ սպաներից առաջինն էր, որ արժանացավ Սբ. Գեորգիի շքանշանի՝ 1807 թ. թուրքերի դեմ Արփայայի ափին մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար: 1809-1820 թթ. գեներալ-մայոր Ֆ. Հախվերդյանը եղել է Իմերեթիայի կալվինների եւ խաղաղ լեյենների կառավարիչ, Ղազարի զինվորական պարեն: Իսկական պետական խորհրդական Վասիլի Հախվերդյանը Պավել 1-ինի որդիների՝ թագաժառանգներ Միխայիլի եւ Նիկոլայի զինվորական դաստիարակն էր:

20-րդ դարի սկզբին եւ Առաջին աշխարհամարտի տարիներին Հախվերդյանների գերդասանից այլի ընկավ առանձնապես Հովհաննես Հախվերդյանը՝ Վասիլի Հախվերդյանի որդին:

Հովհաննես (Իվան) Վասիլի Հախվերդյանը ծնվել է 1873 թ. հուլիսի 29-ին, Պետերբուրգում: Զինվորական ծառայության Հախվերդյանն անցավ 1890 թ. սեպտեմբերի 1-ին՝ Պետերբուրգի 1-ին կադետական կորպուսում ռազմական գիտությունների ամբողջ կուրսն անցնելուց հետո: Պավելյան հետեւակային ուսումնարանում շարային կոչումով յունկեր էր: 1891 թ., սեպտեմբերի պոդպորուչիկի կոչում, Հախվերդյանը նշանակվեց վաշտի հրամանատար: Մեկ տարի անց Հախվերդյանը դարձավ գումարտակի հրամանատար, ընդունվեց եւ գերազանց ավարտեց գլխավոր շտաբի Նիկոլայյան ակադեմիան: 1895 թ. օգոստոսի 5-ին նա ստացավ պորուչիկի, 1900 թ. մայիսի 6-ին՝ շտաբս-կապիտանի, 1902 թ. մայիսի 28-ին՝ կապիտանի կոչումներ: 1904 թ. փետրվարի 17-ին Հախվերդյանն ուղարկվեց Արեւելք՝ նշանակվելով 1-ին Սիբիրյան բանակային կորպուսի հատուկ հանձնարարությունների գծով սպայի պաշտոնում: Այդ կորպուսի կազմում առաջին իսկ օրերից նա ակտիվ մասնակցություն ունեցավ 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին, այլի ընկավ մասնավորապես Լյաոյանի, Շանհայի եւ Մուկդենի ճակատամարտերում: Մարտական ծառայությունների համար Հախվերդյանը պարգեւատրվեց Սբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով՝ «Խիզախության համար» մակագրությամբ, Սբ. Աննայի 3-րդ աստիճանի սրով եւ ժապավենով, Սբ. Սանիսլավի 3-րդ աստիճանի՝ սրով եւ ժապավենով, եւ 2-րդ աստիճանի՝ սրով, Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի՝ սրով եւ ժապավենով, շքանշաններով, եւ «Ի հիշատակ 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի» բրոնզե մեդալով:

1906 թ. ապրիլի 2-ին Հախվերդյանին շնորհվեց փոխգնդապետի զինվորական կոչում, նա ուղարկվեց Միջին Ասիա, նշանակվեց Սեմիրեչիե մարզի զորքերի շտաբի հանձնարարությունների գծով սպա, իսկ 1909 թ. հոկտեմբերի 9-ին՝ Թուրքեստանյան զինվորական օկրուգի շտաբի ավագ հաճիարզ: 1910 թ. Հովհաննես Հախվերդյանին շնորհվեց գնդապետի կոչում: Մինչեւ 1913 թ. հուլիսի 23-ը Հախվերդյանը կատարում էր թուրքեստանյան կազակային դիվիզիայի շտաբի պետի պարտակնությունները: Միջին Ասիայում անբասիր ծառայության համար նա պարգեւատրվեց մի շարք մեդալներով եւ Բուխարայի Ոսկե աստղ 2-րդ աստիճանի շքանշանով:

Առաջին աշխարհամարտի նախօրեին Հ. Հախվերդյանն ուղարկվեց ծառայության Պետերբուրգյան զինվորական օկրուգ՝ նշանակվելով Սվեաբորգի ամրոցի զորքերի շտաբի պետ, ապա՝ 3-րդ, հետո 5-րդ հետեւակային դիվիզիաների հրամանատար: Այս պաշտոններում նա մասնակցեց Առաջին աշխարհամարտի Հյուսիս-արեւմտյան ռազմաճակատի մարտական գործողություններին եւ այլի ընկավ մի շարք մարտերում, մասնավորապես՝ Դնեստր, Մարիցա եւ Սերեթ գետերի շրջաններում տեղի ունեցած մարտերում: Իր սխրագործությունների համար նա պարգեւատրվեց «Ի հիշատակ Ալեքսանդր 3-րդի գահակալության եւ Նորին կայսերական մեծությունների Սուրբ թագադրության» արծաթե եւ «Ռոմանովների տան գահակալության 300-ամյակի հիշատակին» բրոնզե մեդալներով:

1916 թ. սկզբին Հախվերդյանն ուղարկվեց Կովկասյան ռազմաճակատ՝ Թիֆլիս, եւ նշանակվեց, նախ՝ Տարտիզոնում գտնվող 127-րդ հետեւակային դիվիզիայի, ապա՝ Պարսկաստանում տեղաբաշխված 2-րդ Կովկասյան հեծյալ կորպուսի շտաբի պետ: Այստեղ նա այլի մասնակցություն ունեցավ Կովկասյան ճակատում թուրքական զորքերի դեմ մղված մարտական գործողություններին, Արեւմտյան Հայաստանի տարածքների ազատագրմանը: 1916 թ. հոկտեմբերի 22-ին Հովհաննես Հախվերդյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

1917 թ. վերջին՝ ռուսական Կովկասյան բանակի փլուզումից հետո, Հախվերդյանը Կովկասյան ռազմաճակատի հրամանատարներ, գեներալներ Պրժեւալսկու եւ Լեբեդինսկու հետ մասնակցեց հայկական ազգային զորամասերի՝ մասնավորապես հայկական բանակային կորպուսի կազմավորմանը, հաստատակցելով Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի անդամներ Ա. Սիարոնյանի, Հ. Քաջազնունու, հայկական բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանի, կորպուսի շտաբի պետ, գեներալ Ե. Վիշինսկու եւ այլոց հետ:

1918 թ. հուլիսին, Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, Հախվերդյանն ընդգրկվեց Հայաստանի առաջին կառավարության կազմում՝ որպես զինվորական նախարար: Նրա նշանակման մասին հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, Հայաստանի առաջին Հանրապետության թվով երրորդ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը գրել է. «Զինվորական գործը զինվորական գիտության վրա կազմակերպելու... նոյտակով զինվորական նախարարի պաշտոնին կանչվեց մասնագետ Հախվերդյանը, որ հմուտ էր զինվորական գործի մեջ եւ ոչ մի հոսանքի էր պատկանում... Նա բարի բուն իմաստով զինվորական էր, հոգով, մտքով, պատրաստությամբ, եւ նա բոլորի աջակցությամբ կազմակերպում է զինվորական գործը իր ուզածի նման՝ համապատասխան ռուսական զինվորական գիտելիքների»:

Հ. Հախվերդյանի անմիջական ջանքերով եւ ղեկավարությամբ, չնայած գոյություն ունեցող մի շարք լուրջ արգելքներին, մինչեւ 1918 թ. աշուն կազմավորվեց Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարությունը՝ իր աշխատակազմով, ձեւավորվեցին հայկական ազգային զինված ուժերը, եւ ստեղծվեց հայկական առանձին դիվիզիան: Նրա նախարարության ժամանակահատվածում (1918 թ. հունիս-1919 թ. մարտ) հայկական բանակի ջանքերով Հայաստանի Հանրապետությանը միացվեցին Թուրքիայի կողմից նախկինում բռնազավթված որոշ հայկական տարածքներ, հայկական բանակի հաղթանակով ավարտվեց Հայաստանի անկախության հռչակումից անմիջապես հետո բռնկված հայ-վրացական պատերազմը: «Հայ վրացական պատերազմի արդյունքը եղավ այն, որ Հայաստանը փաստորեն կարողացավ իր տիրապետության տակ վերցնել Վրաստանի կողմից զավթված հայկական տարածքների մեծ մասը եւ ստիպեց վրացիներին այստեղ ավելի զգույշ եւ հարգալից վերաբերվել հայերին», իր հուշերում գրել է Հ. Հախվերդյանը:

1919 թ. մարտին՝ զինվորական նախարարի պաշտոնը թողնելուց հետո, Հ. Հախվերդյանը ծառայությունը շարունակեց հայկական զինված ուժերում, ակտիվ մասնակցություն ունեցավ Հայաստանի ռազմահրամանական կյանքին: 1919 թ. մարտի 25-ին նա նշանակվեց Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարությանն առընթեր ռազմական խորհրդի անդամ, իսկ նույն թվականի ապրիլի 25-ին՝ նաեւ ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի (սպարապետի) շտաբի պետ: 1919 թ. մայիսի 28-ին, ՀՀ կառավարության որոշմամբ, Հախվերդյանին շնորհվեց գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, գեներալ Հախվերդյանը, ի թիվս հայկական բանակի հարյուրավոր սպաների, ենթարկվեց բռնաճնշումների, ձերբակալվեց եւ ուղարկվեց Բաքու: 1921 թ. բանից ազատվելուց հետո նա երկար տարիներ խորհրդային Հայաստանում զբաղվել է դասախոսական գործունեությամբ, աշխատել է Երեւանի բուհերում, որպես գինդեկ: Այդ տարիներին Հախվերդյանը շարադրել է իր հուշերը, որոնք մինչեւ օրս պահվում են Հայաստանի ազգային արխիվում: Այդ հուշերը, որոնցում հանգամանորեն ուսումնասիրված է ռազմական իրավիճակը Հայաստանում 1918-1921 թթ., նաեւ հրատարակվել են:

Մեր-ողջ կյանքը ազնվորեն հայրենիքին նվիրած տաղանդավոր զորավար, մեծ հայրենասեր Հովհաննես Վասիլի Հախվերդյանը 1937 թ. զոհ դարձավ ստալինյան բռնաճնշումներին: ■

ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ԽԵՆԹ ՎԱՆԵՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԵՆՆԵՅԱՆԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հովհաննես Պեննեյանը (Պենյան) ծնվել է Վանում: Աշակերտել է Խրիմյան Հայրիկին ու Փորթուգալյանին:

1896թ. թողնելով ծննդավայրը, տեղափոխվում է Կովկաս: Կարճատեւ թափառելով Ռուսաստանում, հասնում, մինչեւ Հարավային Ամերիկա եւ Չիլի:

Չիլիում բախտը նորն ժպտում է, եւ մեծ հարստություն է դիզում: Մայրաքաղաք Սանտյագոյում տասնյակ միլիոնների արժողության կալվածքներ է գնում: Այստեղ նորն սկսում են կոչել Դոն Խուան Պեննե: Շուտով ամուսնանում է մի չիլիացի աղջկա հետ եւ ունենում բազմաթիվ զավակներ:

Չնայած օտարության մեջ ապրելուն եւ հսկայական հարստությանը, Դոն Խուանը հոգով շարունակում է մնալ վանեցի հայ: Որքան միլիոնները ավելանում են, այնքան նրա մեջ սասանվում է հայրենաբաղձությունն ու թախիծը: Միայնակ մնալով տասնյակ հազարավոր մղոններ հեռու իր ծննդավայրից, նա շարունակում է ապրել իր Վանով ու հայությամբ:

Եվ, մի օր էլ հայտարարություն է տալիս Չիլիի թերթում. «100 ոսկու կտամ մեկին, ով մոտս բերի մի հայի»: Շուտով նորն է նեկայանում մի մարդ, խոսում հայերեն ու պահանջում իր 100 ոսկուն:

Միլիոնատերը հեռագրում պատմել է. «Պիտի խենթանայի: Ամբողջ օրը հետը անցուցի, հուշերի ու հայերեն խոսեցա, կարոտս առի, բայց վերջը պարզվեցավ, որ մարդը ...ասորի է»:

Հայտնի չէ, թե նա այդ մարդուն ի վերջո տվե՞լ է խոստացած 100 ոսկուն, թե՞ ոչ:

Ինչպես ժողովուրդն է ասում, «Չարի բերանը ջուրն էլ տանում է»:

Դոն Խուանը, ինչ-ինչ հանգամանքներում, կորցնում է իր ողջ կարողությունը: Հարստության հետ կորցնում է նաեւ խելքը եւ խենթի պես ամիսներով թափառում Սանտյագոյի փողոցներում:

Մի օր էլ փողոցում հանդիպում է երկու ոտից զրկված մի մարդու, որը փոքրիկ սայլակի վրա նստած, գվարթ երգելով առաջ էր շարժվում՝ սայլակը ձեռքով մղելով: Այդ մարդու կենսուրախությունը այնքան է ազդում Դոն Խուանի վրա որ մեկեն խենթությունն անցնում է ու նորից խելքը գլուխն է գալիս:

1899թ. նա վանեցու հնարամտությամբ ու համառությամբ, հավաքում է ընտանիքին՝ կնոջն ու չորս աղջիկներին եւ ճամփա ընկնում դեպի Հարավային Աֆրիկայի Տրանսվաալ բուրական հանրապետություն՝ արամանդ որոնելու: Սակայն, դեռ ճանապարհին, իր յար բախտից, սկսվում է Անգլո-բուրական պատերազմը (1899-1902), որը հօդս է ցնդեցնում նրա «արամանդ» երազները:

Այդ բոլորին գումարվում է նաեւ այն, որ նավի վրա նրա ընտանիքի անդամների թիվը աճելանում է եւ մեկ աղջկանով:

Տեսնելով, որ արամանդից բան դուրս չեկավ, Դոն Խուանը տեղափոխվում է Արգենտինա եւ հաստատվում Բուենոս Այրեսում:

Այստեղ բախտը նորից ժպտում նրան: Սկսում է կառուցի ահռելի բարձրակարգ պատրաստել, որոնցով կանայք դեմերին բռնաբարոշի էին խում: Այդ ձեռներեցության շնորհիվ արագորեն հարստանալով, շուտով կրկին տիրանում է մեծ կարողության:

1918-20թթ., Հայաստանի Հանրապետության շրջանում, Դոն Խուանը որոշում է գալ Անկախ Հայաստան: Սակայն վերահաս աղետը՝ խորհրդայնացումը, խափանում է նրա ցանկությունը: Այդ ծանր օրերին նա այնքան է ազդվում, որ միշտ մնում նորից խելագարվի:

Ֆրանսիայի վարչապետ Ռայմոն Պուանկարեին հրած երկու հեռագրում նա պահանջում է անմիջապես օգնել Հայաստանին՝ թուրքերի բոլշեւիկյան լուծը, այլապես սպառնացել է նա, որ Ֆրանսիան էլ Հայաստանի օրն կընկնի:

Եվ երբ իր հեռագրերը արդյունք չեն տալիս, գնում է Պուանկարեին, որ նա մեռնի, իսկ ինքն էլ այլեւս երբեք ոտք չի դնի Ֆրանսիայի հողի վրա:

Հեռագրում գոհունակությամբ ասել է. «Եվ տեսա՞ր, Պուանկարե մեռավ: Ու ես ալ ոտք պիտի չդնեմ այդ ազգի հողի վրա»: Նա, իրոք, այդպես էլ մեռավ, առանց Ֆրանսիայի հողի վրա ոտք դնելու: Ֆրանսիան էլ հասավ Հայաստանի օրին՝ գրավվեց ֆաշիստների կողմից: Եթե ողջ մնար, երեւի կասեր. «Տեսա՞ր, անեծքս կատարվեց»:

1937թ. արդեն ուներ տասներեք աղջիկ, մեկ տղա, հսկայական հարստություն եւ մեծ համբավ:

Քառասուն տարի օտարության մեջ ապրելով, նա զարմանալիորեն չէր փոխվել: Հոգով եւ մտքով շարունակել է մնալ ազգասեր հայ, իսկ լեզվից առաջորեն բուրել է Վանը:

Իր միակ ցանկը եղել է այն, որ կյանքի եւ աբխատանքի արդյունքը կոչած է համարել հայության համար:

Որդին՝ Նարցիս Պեննեն (Ռնոլդս Հովհաննեսի Պեննեյան, կամ Պենյան, 1884թ. ծնվ.) եղել է անկախի գրականագետ, Բուենոս Այրեսի համալսարանի դոկտոր, Արգենտինայի փայլուն մտավորականներից մեկը:

10 դուստրերը աշխատել են իրենց հոր «Անուշահոտության գործարանում»:

Որդին եւ տասներեք դուստրերը հայերեն չեն իմացել եւ հայության հետ ոչ մի կապ չեն ունեցել: Սակայն, ծերունին ասել է. «Ես այնպես ըռած եմ, որ զավակներս մինչեւ մահ հիշեն իրենց հայկական ծագումը»: Բոլորին «Ցիրելի» էր հայկական թթու ու աղերս եւ կմախ հայկական անուններով՝ Սոսիի, Արշակուհի, Ցարուհի, Էլիզաբեթ, Թագուհի, Հայկուհի, Մանուշակ, Մարգարիտա (գործարանատեր, 1875թ. ծնվ.), Շուշան, Վարդանուշ Պենյաններ:

Մի անգամ, Դոն Խուանը «Հայրենի» ամսագրին խոստանում է 30 000 ֆրանկ մրցանակ տալ, գրաբար հայերեն երգի համար, ոյժանով, որ երգի մեջ չլինեին «ձ», «ղ», «խ» եւ նման այլ «վանահնչուն» տառեր: Երբ Սիմոն Վրացյանն (հաղարական, ոչեական գործիչ, 1882-1969) ու Ռուբեն Վարդանյանը (Ռեն, գրող, խմբագիր, 1893-1958) նման հանդգնում են հեռ կանգնել այդ անհեթեթ մտքից եւ գումարը հասկացնել սովորական երգի ու երաժշտության համար, նա համառորեն հակառակվում է: Միաժամանակ զարմանում է, թե մի՞թե հայերի մեջ գրաբար գիտցողներ չկան: Նրա համար գրաբարից դուրս հայերեն գրական լեզու գոյություն չուներ: Նա երգը համարում էր ազգի բարձրացման գլխավոր ազդակ: Թերեւս ճիշտ էր ասում Ռենը. «Այս խորամանկ վանեցին մեզ ձեռ է առնում. մտքում ոչ թե դրամ տալն է, այլ իր մասին խոսեցնելը»:

Դոն Խուան Պեննեն մեռավ, ու 30 000 ֆրանկն էլ հետը գնաց, եւ ամբողջ հարստությունն էլ կորավ հայության համար:

Հայության համար կորան նաեւ հայկական մեծ թթուով ու գեղեցիկ անուններով նրա 14 զավակները ... ■

Հելիոհամակարգեր

Համազասպյանի անհատական հելիոհամակարգերը

Առաջինը կհելիոֆիկացվի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մասահակցությունը կամ Աստված, ով գիտե, այս տարվա հունվարի 19-ին Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում երկրի այն ժամանակվա վարչապետ, այժմ նախագահ Սերժ Սարգսյանին հանդիպեցրեց տեխնիկական գիտությունների դոկտոր Վահան Համազասպյանի հետ, ով իր հայրենի գյուղը հելիոֆիկացնելու ծրագիր ունի եւ հենց այդ օրը գյուղի եկեղեցում էր. գյուղ էր տարել առաջին անգամ ցուցադրելու իր եւ իր ափսեաձեւային խմբի նախագծած ու կառուցած արեւային սարք: Հենց եկեղեցում էլ նոան ներկայացրին Ս. Սարգսյանին, ով նախագահի թեկնածուի ընտրարշավի էր գյուղում:

Նախագահի թեկնածուի հետ Համազասպյանը կես ժամ զրուցեց եւ նոանից ընթրոնում եւ աջակցության խոստում ստացավ. «Ձեր ապագի 50 տոկոսը որ իրականություն դառնա, դա մեծ բան կլինի Հայաստանի համար», ասաց Ս. Սարգսյանը:

Վահան Համազասպյանը ստեղծել է արեւային էներգիայով աշխատող տեխնիկա՝ այսպես ասած **հելիոհամակարգեր,** որոնք օգտագործվում են տաք ջուր ստանալու, սնունդ վերամշակելու եւ կենցաղային մի, շարք այլ խնդիրներ լուծելու համար, եւ որոշել է նախ իր ծննդավայրի ընտանիքներում առաջինը նոոգույն տեխնոլոգիան ներդնել:

Սնունդ վերամշակելիս արեւային տեխնիկայի կիրառությունը բարձր տեխնոլոգիա է ոլորտում, նոա նախագծած սարքերն այսօր նմանակը չունեն աշխարհում, անցել են լրիվ փորձարկումները եւ պատրաստ են սերիական արտադրության: Իսկ Ս. Սարգսյանին Համազասպյանը պատմել է Սառնաղբյուր գյուղը հելիոֆիկացնելու իր ծրագրի մասին եւ այն, որ հեռագայում հույս ունի հելիոֆիկացնել Հայաստանի մյուս գյուղերը, եւ ընդհանրապես՝ աշխարհն է գալու հելիոֆիկացիայի գաղափարին:

Նախապատմությունը

Տեխնիկական գիտությունների դոկտոր Վահան Համազասպյանը ծնվել է Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղում, ավարտել է Սոչիայի թիվ 3 միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով, որից հետո ինչպես ասում է, ինքն էլ չգիտի, ինչպես ընդունվել է Մոսկվայի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը եւ Մոսկվայի Կիսահաղորդչային էլեկտրոնիկայի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան:

1981 թվականին իր ասպիրանտների հետ Արտաքսում հիմնեց «Էլեկտրոնստանդարտ» հայկական գիտահետազոտական ինստիտուտը, որը տպատարկում էր Անդրկովկասի եւ Հյուսիսային Կովկասի ռազմական արդյունաբերության 500 ձեռնարկությունների: Աշխատել է Մոսկվայի, Լենինգրադի եւ Հայաստանի էլեկտրոնային արդյունաբերության ձեռնարկություններում:

Արեւային տեխնիկայով սկսեց զբաղվել 1993 թվականից, իր ասպիրանտ Վալերի Մարկարյանի հետ: 1989 թվականից արդեն Հայաստանի ռազմական արդյունաբերության 150 խոշոր ձեռնարկությունները փլուզվում էին (ընկնում էին կոնվերսիայի տակ՝ ինչպես ասում են). դա նշանակում էր շուկաները կորցնել եւ զրկվել արտադրատեսակներից: Հայաստանի արդյունաբերության աղյուսի բաժինն ընկնում էր այդ 150 խոշոր ձեռնարկություններին: Համազասպյանն ու իր համախոհները խնդիր դրեցին դուրս գալ այդ իրավիճակից եւ այնպիսի զբաղմունք գտնել, որպեսզի կարողանան օգտագործել գործարանների տեխնիկական եւ գիտական պոտենցիալը. շատ փնտրտուքներից հետո նոանք հանգեցին այն մտքին, որ Հայաստանում հեռանկարային կարող է լինել արեւային տեխնիկան. այդ գործում կարելի է միավորել Հայաստանի էլեկտրոնային արդյունաբերության եւ մեքենաշինական բազան, (գիտական սարքաշինություն է նեռառում):

Այս ուղղությամբ էլ հանձնախոները սկսեցին աշխատել, եւ արդեն հասել են շատ բարձր մակարդակի՝ Համազասպյանն ու իր ասպիրանտների մի մեծ գիտական խումբ աշխատում է այսօր հելիոհամակարգերի նոորոնոր տեսակների ստեղծման վրա:

Ոլորտում աշխարհի միտումները նկատի՞ են առնված

Պատմում է Համազասպյանը. «1993 թ. մենք որոշեցինք, որ ոչ մի գրականություն չենք նայում. մեր նոպատակը ոչ թե էներգիայի կամ այլ ոլորտ զարգացնելն էր, այլ արդյունաբերության համար նոր բնագավառ գտնելը. մեր արդյունաբերության ունեցած գիտական եւ տեխնիկական ներուժն օգտագործելը: էդ իմաստով կարելի չկար ուսումնասիրել ուրիշների փորձը, որ իրենց սխալ ճանապարհներով մենք չգնայինք, քանի որ մեր կադրային ներուժը շատ բարձր մակարդակի վրա էր եւ է. ես չեմ կարծում, որ արտերկրում նման դասի մասնագետները նույնիսկ կգբաղվեին էդ կարգի գործերով, եւ արդյունքներն իրենք վկայում են իմ ասածի մասին...»:

Վահան Համազասպյանի բառերով՝ այսօր նոանք իրենց ձեռքբերումների ողջ պատկերը ցույց չեն տալիս՝ միայն այսքերգի գագաթը, քանի որ գիտության նորությունը սովորաբար միշտ աջուձախից գողացվում են, բայց շատ-շատ գյուտեր ունեն ոլորտում, որոնց արտերկրի գիտնականները դեռ չեն հասել. արեւային տեխնիկայով դրսում օգտագործում են ջրաբաշխիչներ միայն, դա հագեցած տուկա է, ու սպառողական հատկանիշներով այդ սարքերը դեռ չեն բավարարում պահանջարկը (գին, հարմարավետություն եւ այլն):

Առաջ գնում են՝ ֆոտոդիոդի, հոսանք ստանալու ուղղությամբ, բայց մերոնք այլ ուղղությամբ են գնացել, որը չի կիրառում աշխարհը՝ հեռանկար չեն տեսել այդ ուղղության մեջ եւ սխալվել են. «Մենք տեսանք մեծ տուկա՝ ամբողջ աշխարհը. 2020 թվականի համար հաշվարկած է, որ էդ տուկան լինելու է 4-5 տրիլիոն դոլարի սահմաններում: 1993 թվականին նավթի մեկ բարելը մոտավորապես 20 դոլար էր, էսօր արդեն 146, գազն անընդհատ թանկանում է, էներգետիկայի խնդիրը դառնում է աշխարհի թիվ մեկ պրոբլեմներից մեկը, այնպես որ այլընտրանքի որոնումը հրատապ է»:



Հայաստանի նման նվազ ռեսուրսներ ունեցող երկրին հրաշքներ պետք են՝ ոտքի կանգնելու եւ սնեսապես հզորանալու համար: Հրաշքներ՝ բառիս ուղիղ եւ փոխաբերական իմաստներով, ոչ առաջինը կխանգարի,ոչ էլ երկրորդը: Եթե միայն հիշենք, թե տարբեր մասնագետներ ինչպես են անվերջ մտմտում՝ գտնելու ֆիզ ծախսատար ցյուղեր եւ տարածաշրջանային մակարդակով զարգացնելու՝ շահույթ բերելով պետությանն ու իրենք իրենց, հիշենք հաջողված եւ չներդրված, ընթացքից ծախողված գյուտերը, կարելի կլինի փաստել, որ հայ միտքն աշխատում է՝ ընթրոնելով, որ տարածաշրջանային մեզ շրջանցող ծրագրերի, մեզ շրջապատող ու մեզ կոպ տալ պատրաստվող հզորների առկայությամբ մենք այլընտրանք չունենք՝ գործի պետք է դնենք մեր միտքը, մեր գիտական ներուժն ու հնարամտությունը՝ հզորների ոտքի տակ չգնալու համար: Ապա եւ տեր կանգնենք մեր մտքին: Նույնիսկ տարբեր տեղական եւ դրսեկ նոստրադամուսներ գուշակում են, որ Հայաստանում պետք է մի քանի հրաշքներ կատարվեն, այդ թվում՝ գտնվելու է էլեկտրաէներգիա ստանալու այնպիսի ոլորտի մեթոդ, որի շնորհիվ Հայաստանն այլեւս էներգիայի պրոբլեմ չի ունենալու:Հերունին փորձում է, չէ՞, արեւի էներգիան վերածել հոսանքի, ուրիշ բան, որ մերոնք առայժմ իրենց սոտերմարկետներով են զբաղված եւ բավարար չափով չեն սատարում գիտականին՝ իրականացնելու գիտական մտահղացումը:

Դրանք ծախսատար նախագծե՞ր են

«Մեր խնդիրն է ստեղծել պարզ, հուսալի եւ կիրառության համար շատ հարմար սարքեր, որոնք օգտակար կլինեն գյուղացուն՝ իր տնտեսության մեջ օգտագործելու», ասում է Համազասպյանը:

«Դրանց արտադրության համար մեծ ներդրում չի պահանջվում. Հայաստանում կան բազմաթիվ գործարաններ, շատերի հետ մենք աշխատել ենք, եւ կանգ առանք «ԱԷՏԱ» բաց բաժնետիրական ընկերության վրա՝ մեխանիկական գործարան է, մասնավոր ֆիրմա, պատկանում է Արշակ Աբրահամյանին՝ պետական մտածողություն ունեցող գործարարի, որը թույլ տվեց գիտնականներին օգտագործել տեխնիկական բազան եւ վերջացնել նախագծային աշխատանքները:

Արտադրելիս, իհարկե, մեր համագործակցությունը կշարունակվի, բայց ես գտնում եմ, որ Արշակ Աբրահամյանի նման գործարարները կարող են շատ օգտակար լինել այսպիսի գործերում, մնացած գործարարները այդ օրինակով կտեսնեն, թե գիտնականին օգնելը կորած տեղ չէ: «Սոիտակ» գիտական եւ մարգաաորդարանական կենտրոնը (հինգերիր Նորայր Մուրադյան, Իվան Սիլաեւ, Աբել Ադամբեկյան եւ այլք) եւս մեծ ներդրում ունի մեր գործում: Կենտրոնի ինֆրակառուցվածքները թույլ են տալիս զարգացնելու համահայկական բիզնեսը հելիոտեխնիկայի բնագավառում»:

Ե՞րբ կսկսվի սերիական արտադրությունը

Համազասպյանն ասում է, որ սերիական արտադրությունն ուզում էին Սոիտակում սկսել՝ հույս ունեին, որ Սոիտակի վերելակաշինական գործարանում են այն անելու: Գործարանն ունի հարմար մասնաշենքեր, կառուցված երկրաշարժից հետո, 1993-ին այնտեղ փորձարարական աշխատանքներ էին կատարում, հնարավորություն կար հոսքագիծ ստեղծել.«Բայց ափսոս գործարանը փլուզվեց, հիմա վաճառել ու խանդում են երկրաշարժի խանձյակի այս օրերին. նախագահին ես Սառնաղբյուրում ասացի, որ մենք պատրաս ենք ստեղծել 1000 աշխատատեղ Սոիտակում, բայց այսօր այդ խնդիրը հանվում է, որովհետեւ գործարանը դեմոնստրացիայի տակ են գցել՝ դեռ լուրեր են, իհարկե, բայց գործարանը այնպիսի մարդկանց ձեռքում է, որ այլ կերպ են նայում խնդրին, իսկ մասնագետներն ուրիշ ձեւով են աշխատում»:

Իսկ ահա «ԱԷՏԱ» գործարանն օրական 10 համակարգ 4-5 կվտ հզորության արեւային սարքեր արտադրելու հնարավորություն, նաեւ տարածքներ ունի, որտեղ կարելի է կառուցել նոր գործարան, արտադրությունը դնել հոսքագծի վրա, այլ խոսքով՝ զանգվածային արտադրության անցնել: Սա փորձնական փոքր սերիական արտադրություն է լինելու, բայց որպեսզի արեւային սարքերի ինքնարժեքը ցածր դառնի, եւ միջազգային շուկայում կարողանան դիմանալ, պետք է անցնել խոշոր սերիական արտադրության, որին Համազասպյանն ու իր համախոհները պատրաս են, արդեն նմուշներն ունեն:

Ըստ Համազասպյանի՝ երկրագնդի հարավային արեւոտ բնակավայրերի՝ մի քանի մլրդ բնակչություն ունեցող երկրներն են այն շուկան, որոնք կարող են դառնալ մեր սարքերի պոտենցիալ սպառողը:

Հասանք, վերջապես, սարքերի նկարագրմանը

ԴԿՀ. այսպես է սարքի անունը՝ Դոկտոր Վահան Համազասպյան:

Սարքերը դեռեւս պատենտավորված չեն՝ կոնբերցիոն գաղտնիք է, դեռ չեն հայտարարում ոչ տեսականի, ոչ էլ լայն առումով պիտանելիության բոլոր ոլորտները, բայց հեռաբիր շատ նորություններ ունեն մեր «արեւային» գիտնականները, այնպիսիք, որ աշխարհում չկան, դրանց մասին կիմացվի, երբ արդեն հոսքագծի վրա կարտադրվեն:

Այժմ արդեն, երբ վստահ են իրենց սարքերի հաջողությանը՝ մեր գիտնականները նայել են աշխարհում հայտնի այս դասակարգման սարքերի ֆունկցիոնալ հնարավորությունները. կան, ասենք, մինչեւ 1 կվտ հզորության փոքր սարքեր, կան մեգավատանոց կայաններ, բայց միջակայքի փոքրիկ դիապազոնը, որով մերոնք աշխատել են, չկա: Դա ընդգրկում է 4-ից մինչեւ 200 կիլովատ միջակայքը, այդ հզորու-

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հաստատված ՀՀ կառավարության 2008թ.հունիսի 5-ի թիվ 569-Ն որոշման, ՀՀ ագրոարդյունաբերության և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված և ոչնչացման սեփականություն հանդիսացող օտարման ենթակա տրանսպորտային միջոցը

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Գնահատված արժեքը 17.04.07թ. դրությամբ /դրամ/	19.08.08թ. աճուրդի		03.09.08թ. աճուրդի		18.09.08թ. աճուրդի		03.10.08թ. աճուրդի	
				մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԵրԱԶ-762-Ա», (պետհամարանիշը՝ 722 ՏՍ 45)	1991թ.	212000	159000	7950	127200	6360	101760	5088	81408	4071

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	20.10.08թ. աճուրդի		04.11.08թ. աճուրդի		19.11.08թ. աճուրդի		04.12.08թ. աճուրդի		19.12.08թ. աճուրդի	
			մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԵրԱԶ-762-Ա», (պետհամարանիշը՝ 722 ՏՍ 45)	1991թ.	65127	3257	52102	2606	41682	2085	33346	1668	26677	1334

Հաստատված ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի թիվ 569-Ն որոշման՝

-Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերության և սոցիալական հարցերի նախարարը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկանգամյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված՝ 18000 դրամ վճարը (նեղությալ ԱԱՀ), ինչպես նաև գույքային իրավունքների գրանցման հետ կապված՝ օրենքով սահմանված վճարները և տուրքը:

Աճուրդը կանցկացվի դրական (գնի աճելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 12:00-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջող աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջող աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև հանձնաժողովները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երևան, Դ.Անհաղթի 23 /4-ոդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիր, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձերի հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորներ՝ աճուրդի մասնակից չհանդիսացող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչև աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչև 17:00ժ (բացառությամբ ժամը 13:00-ից մինչև 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ առնվազն նվազագույնը հաղթնման (հայտի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, հանդիսանում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հանդիսացած մասնակիցը պարտավոր է՝ հանձնաժողովի սեղանին 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում և ապրակ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հանդիսացած մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնաժողովի սեղանին 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և տեղադրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուտքած նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Ավտոմեքենաները գտնվում են ք.Գյումրի, Երևանյան 17:

Վաճառվող լոտերին ծանոթանալու համար զանգահարել՝ /03102/ 3-13-28 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երևան, Դ.Անհաղթ 23 /4-ոդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձևով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հաստատված ՀՀ կառավարության 2008թ.հունիսի 5-ի թիվ 569-Ն որոշման, ՀՀ ագրոարդյունաբերության և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ «Գյումրու տուն- ինտերնատ» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված և ոչնչացման սեփականություն հանդիսացող օտարման ենթակա տրանսպորտային միջոցը

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Գնահատված արժեքը 17.04.07թ. դրությամբ /դրամ/	19.08.08թ. աճուրդի		03.09.08թ. աճուրդի		18.09.08թ. աճուրդի		03.10.08թ. աճուրդի	
				մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Ուազ-3962», (պետհամարանիշը՝ 608 ՏՍ 45)	1991թ.	230000	172500	8625	138000	6900	110400	5520	88320	4416

Հ/Հ	Գույքի անվանումը	20.10.08թ. աճուրդի		04.11.08թ. աճուրդի		19.11.08թ. աճուրդի		04.12.08թ. աճուրդի		19.12.08թ. աճուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Ուազ-3962», (պետհամարանիշը՝ 608 ՏՍ 45)	70656	3533	56525	2827	45220	2261	36176	1809	28941	1448

Հաստատված ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի թիվ 569-Ն որոշման՝

-Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերության և սոցիալական հարցերի նախարարը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկանգամյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված՝ 18000 դրամ վճարը (նեղությալ ԱԱՀ), ինչպես նաև գույքային իրավունքների գրանցման հետ կապված՝ օրենքով սահմանված վճարները և տուրքը:

Աճուրդը կանցկացվի դրական (գնի աճելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:00-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջող աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջող աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև հանձնաժողովները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երևան, Դ.Անհաղթի 23 /4-ոդ հարկ) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիր, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձերի հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորներ՝ աճուրդի մասնակից չհանդիսացող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչև աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչև 17:00ժ (բացառությամբ ժամը 13:00-ից մինչև 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ առնվազն նվազագույնը հաղթնման (հայտի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, հանդիսանում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հանդիսացած մասնակիցը պարտավոր է՝ հանձնաժողովի սեղանին 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում և ապրակ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հանդիսացած մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնաժողովի սեղանին 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և տեղադրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուտքած նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Ավտոմեքենաները գտնվում են ք.Գյումրի, Երևանյան խճ. 18:

Վաճառվող լոտերին ծանոթանալու համար զանգահարել՝ /03102/ 4-19-10 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երևան, Դ.Անհաղթ 23/4-ոդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձևով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2008Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23, 4-ՐԴ ՀԱՐԿ)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 14.07.052. N 987Ա որոշմամբ լուծարվող «Ամասիայի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի (հասցեն՝ Շիրակի մարզ, գ. Ամասիա) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Շահագործման տ/թ.	Գնահատված տուկալական արժեքը ներառյալ ԱԱՀ (դրամ)	Ձեռնարկության հողատարածքի կադաստրային արժեքը (դրամ)	Մեկնարկային գինը (դրամ)
		-	-	200000	24048	1196810
1	Վարչական տեսք (113,32 կվ)	1	1989թ.	100000	-	100000
2	Արբանյակ ավտոմեքենա «ԳԱԶ 53-14-01» պետ համար 75-25, շարժիչը՝ N282095, անիվաբեռնակը՝ N1158451	1	1982թ.	120000	-	120000
3	Հատուկ ատենիզացիայի սարքավորում, ավտոմեքենա «ԱԶԱՄ-53», «ԳԱԶ 53» պետ համար 70-25, շարժիչը՝ N82935, անիվաբեռնակը N672889	1	1989թ.	150000	-	150000
4	Ավտոմեքենա «ԳԱԶ 5312» պետ համար 07-65, շարժիչը՝ N0283443, անիվաբեռնակը N1243219	1	1989թ.	80000	-	80000
5	Ջրամբար ծիծեռնա	2	1992թ.	240000	-	240000
6	Վառելանյութի տարա	2	1991թ.	300	-	300
7	Կայմակալներ	1	1978թ.	500	-	500
8	Հեռուստացույց					

* Հանձնարարություն «Ամասիայի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի լուծարային հանձնաժողովի 18.06.08թ. որոշման՝ գնորդը պարտավոր է աճուրդի արձանագրությունը ստանալուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատագրման հաշվին վճարել անշարժ գույքի զբաղեցրած հողամասի կադաստրային արժեքը («Ամասիայի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի անշարժ գույքի զբաղեցրած հողամասերի 1 մ² կադաստրային արժեքը կազմում է 144 դրամ):

Աճուրդը կանցկացվի դասական (գնի աճի) եղանակով: Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հաստատությունները, որոնք մինչեւ ս/թ. օգոստոսի 11-ը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուտքման անդորրագիր, որի չափն է 150 դրամ, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 16000665 1014 դրամային հաշիվը.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վճռաբեկ չեն կարող ունենալ սնանկության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ Ք.Երեւան Դ.Անհաղթի 23/4-րդ հարկ) մինչեւ ս/թ. օգոստոսի 11-ը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Գույքի տեսությունը իրականացվում է ընկերության հանձնակատարի կողմից:

Լսելիան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայական հանձին հանձնարարագիր, տրամադրում է խաչ:

Աճուրդը վարում է աճուրդավար: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախորդ աճուրդավարի մուտքվելի երրորդ հարվածից, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հաշվարկի (հայտի) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուտքվելի երրորդ հարվածից հետո, հանվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է հանվում վիճակախաղի արդյունքով ընտրված մասնակիցը: Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հանված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ ելնելով մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հանված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 8 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գրաված գնից նկատառելի ավելի ինքնաթիռի չափը գծագրանցելու դեպքում հաղթող մասնակիցը՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը: Աճուրդում չհաղթած մասնակիցներին, գրավոր դիմումի առկայության դեպքում, մուտքած նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Վաճառվող լոտին (գույքին) ծանոթանալու համար զանգահարել՝ 52-65-57 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հանձնարարություն ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի թիվ 570-Ն որոշման, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ Գյումրու «Ֆրիդյոֆ Նանսենի անվան ժանկասուն» բժշկական ոչ առեւտրային կազմակերպության հաշվեկշռում հաշվառված եւ բժշկական սեփականությունը հանդիսացող օտարման ենթակա տրանսպորտային միջոց

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Գնահատված արժեքը 29.11.07թ. դրությամբ /դրամ/	19.08.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	19.08.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	03.09.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	03.09.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	18.09.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	18.09.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	03.10.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	03.10.08թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Ֆորդ Տրանզիտ» (միկրոավտոբուս), պետհամարանիշը՝ 852 SL 45	1993թ.	975000	731250	36563	585000	29250	468000	23400	374400	18720

Հ/Հ	Գույքի անվանումը	20.10.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	20.10.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	04.11.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	04.11.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	19.11.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	19.11.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	04.12.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	04.12.08թ. աճուրդի նախավճար /դրամ/	19.12.08թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	19.12.08թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Ֆորդ Տրանզիտ» (միկրոավտոբուս), պետհամարանիշը՝ 852 SL 45	299520	14976	239616	11981	191693	9585	153355	7668	122684	6135

Հանձնարարություն ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի թիվ 570-Ն որոշման՝

-Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկ ամսվա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված՝ 18000 դրամ վճարը (ներառյալ ԱԱՀ), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված՝ օրենքով սահմանված վճարները ու տուրքերը.

Աճուրդը կանցկացվի դասական (գնի աճի) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:30-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջող աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջող աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հաստատությունները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ Ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուտքման անդորրագիր, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 16000665 1014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր, որի չափն է 10000 դրամ (կվճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վճռաբեկ չեն կարող ունենալ սնանկության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Լսելիան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է խաչ:

Աճուրդը վարում է աճուրդավար:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի նախորդ աճուրդավարի մուտքվելի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ առնվազն նվազագույնը հաշվարկի (հայտի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուտքվելի երրորդ հարվածից հետո, հանվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հանված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ ելնելով մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հանված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակիցին, մուտքած նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Ավտոմեքենաները գտնվում են. Գյումրի, Շիրակացի 10:

Վաճառվող լոտերին ծանոթանալու համար զանգահարել՝ /03102/ 3-27-83, 3-27-93 հեռախոսահամարներով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Ղեմի-սարեալը

թյամբ էլ ստեղծվում են Համազասպյանի սարերը:

Եթե, այնուամենայնիվ, կարճ նկարագրելու լինենք՝ սրանք անհատական, կոմբինացված հելիոհամակարգեր են, որոնք տալիս են ջուր եռացնելու, սնունդ վերամշակելու եւ այլ օգտակար գործողություններ կատարելու հնարավորություն եւ կարող են հոսանք տալ: Ասենք՝ մի ընտանիի 200 լիտր եռացրած ջուր կարող է տալ կամ ամենօրյա սնունդը վերամշակելու հիանալի տեխնոլոգիա է, գաղտնիքը թույլ չի տալիս առայժմ ավելին ասել:

Ինչ արժեք կարող են ունենալ այդպիսի սարերը. հաշվարկված է, որ սերիական արտադրության ժամանակ մեկ կիլովատի արժեքը կլինի 150-200 դոլարի սահմաններում, ասենք 4 կիլովատանոց սարը 800 դոլար կարժենա, սակայն այդ արժեքի հետգնման ժամկետը 2 տարի է, այսինքն՝ 2 տարվա ընթացքում ինքն իր ծախսերը կհանի, եւ դրանից հետո դեռ 50 տարի կաշխատի: Շատ հետաքրքրվող սարքեր են, հարմարեցված գյուղացու առօրյա աշխատանքին: Համազասպյանն ու իր խումբը մոտ 30 մոդել են մշակել 15 տարում:

Համազասպյանը երազում է մոտ ժամանակում սարքերի շնորհանդեսը կազմակերպել, որը կլինի նաեւ ոլորտի շնորհանդեսը նավթի գներն այնքան են աճում, որ աշխարհը ստիպված է այլընտրանք փնտրել:

Մի այսպիսի գիտական վարկած կա, ուրիշ շատ այլ վարկածների հետ, ըստ որի տասնամյակներ շարունակ աշխարհի հզոր երկրների կառավարությունները գաղտնի են պահում այլմոլորակայինների մասին տեղեկությունները, քանի որ վախենում են, թե մարդիկ նրանցից էներգիայի ստացման շատ հետաքրքիր մեթոդներ կսովորեն, եւ նավթի ու գազի շահագործման վրա հենված իրենց արդյունաբերությունները կփլուզվեն: Նրանք երեւի ոչնչացնեն թեկուզ այս փոքրիկ ոլորտն իրենց մրցակից համարել ու խանգարել: Բայց Համազասպյանը մատնանշում է աշխարհի հայտնի գիտնականների հետ իր կապերը եւ չի հավատում այդ բանին: Իսկ մենք տեղական նշանակության մի հիշողություն էլ ունենք. Օնիկ Կարապետյանի դեմ, որը խաղալիքի այլընտրանքային կանխարգելման իր մեթոդն ունի, աշխատել եւ աշխատում է արտերկրի եւ տեղական վիրահատական ու ավանդական բժշկության, այսպես ասենք, մաֆիան:

Բայց Համազասպյանը, չգիտես ինչու, հանգիստ է եւ համառում է, որ այս բնագավառում Հայաստանը կարող է լիդեր լինել, համագործակցել նաեւ տեխնոլոգիապես զարգացած երկրների հետ:

Նախագծի հեղինակները



Աբել Աղանբեկյանի հետ

«Սպիտակ» գիտական եւ մարգասաղջատարարական կենտրոնի հիմնադիրներ Ռուսաստանից՝ պրոֆեսոր Նորայր Մուրադյան եւ ակադեմիկոս Նիկոլայ Իվանովիչ Բեխ

Խաղերն անցկացնելու համար անհրաժեշտ է կառուցել ԱՐԵՎԱՅԻՆ ՊՈԼԻԳՈՆ «Սպիտակ» կենտրոնում հատկացված տարածքում: Խաղերի անցկացման վայրը՝ Երեւան, Հալաբյան փ. 28, «Սպիտակ» կենտրոն, Արեւային տեխնիկայի միջազգային պոլիգոն:

Շուտով կյանք կմտնեն

Սառնաղբյուր գյուղը

Նա հրաշալի է համարում մեկ գյուղի հելիոֆիկացիայի շնորհանդեսը կազմակերպել կառավարական բարձր մակարդակով, եւ արդեն այդ գյուղի սահմաններում կազմակերպել սոցիալական էքսպերիմենտը:

Առայժմ երկու սարք ունի պատրաստված, բայց որոնցի շնորհանդեսն արվի միջազգային տպագրատներով եւ բարձր մակարդակով, հարմար կլինել, որ ասենք գյուղի տներում տեղադրվեր 50 համանման սարք. դրա համար ընդամենը 100 հազ. դոլար է պետք.«Շատ կուզեինք, որ շնորհանդեսը լիներ պատշաճ մակարդակով, հանրապետության նախագահի մասնակցությամբ. շատ կոմերցիոն գաղտնիքներ չեմ ուզում բացահայտել, բայց մենք պետք է կարողանանք մոնոդոլ դիրք գրավել այս նոր ոլորտում, համագործակցել պետական ֆիրմաների հետ, բայցեւ՝ կոմերցիոն գաղտնիքները մնան մեզ մոտ, Հայաստանում, աշխարհում էլ ասեին՝ հայերը վերցրել ու մի գյուղ հելիոֆիկացրել են: Ուզում եմ շնորհանդեսին հրավիրել արտերկրի նշանավոր ու ազդեցիկ մարդկանց, օրինակ՝ Շվարցենեգերին, Անգելա Մերկելին, Ալբերտ Գորին, քանի որ նրանք արեւային էներգիայի ջատագովներ են. Ա. Գորը արեւային տեխնիկայով եւ էկոլոգիայով է զբաղվում, հիմա էլ Օբամային պատրաստում է, քանի որ նա էկոլոգիայի խնդիրները դրել է իր ծրագրում: Կալիֆորնիայում ամեն օր Շվարցենեգերը 15 ռոբեանոց ելույթ է ունենում իր Սակրամենտոյից՝ նվիրված արեւային թեմաներին», - երազում է Համազասպյանը՝ շատ կարեւոր համարելով Սառնաղբյուրում հելիոֆիկացման շնորհանդեսին զուգահեռ միջազգային ֆորում կազմակերպելը, որին մասնակցելու նախնական համաձայնություն տվել են Ժորես Ալֆյորովը, Աբել Աղանբեկյանը եւ այլոք, ինչպես նաեւ արեւային խաղեր-ՇՈՈ երեխաների համար՝ սովորեցնելով ճանաչել արեւի էներգիայից եւ սարերից օգտվելու ձեւերը խաղերի ու մրցույթների միջոցով:

Ի դեմ՝ Համազասպյանն առաջին սարն արդեն նվիրել է Սառնաղբյուրի Սուրբ Թադեոս եկեղեցուն, եւ շնորհանդեսի կուսինացիան կլինի արեւով եփած մսաղի բաժանումը Սառնաղբյուրում:

Աշխարհի հզորների քթի տակ հնարավո՞ր է այդպիսի՝ բեկուզ տարածաշրջանային բիզնես

Հնարավոր է, լավատես է Համազասպյանը, նրանք իրենց գումարներն արդեն այս ոլորտում կներդնեն: Իհարկե, նավթին հնարավոր չէ այսօր փոխարինող գտնել ամբողջովին, բայց Արեւի էներգիայով, կվարցե ամանի մեջ, էկոլոգիապես մաքուր եւ հանային արտակարգ ռակներով սնունդը լինելու է արեւով սարքերի սենսացիան եւ ոլորտի այցեքարտերից մեկը:

Հետագա քայլերը.

Սարքը շատ արագ կկոնդիցիոնավորի արտերկրի ֆիրմաները, մենք պետք է կարողանանք պաշտպանել նոր ոլորտը:

Շուկայում մոնոդոլ դիրք գրավելու համար մի շարք խնդիրներում պետության օգնությունն կարիք կլինի. հարկային եւ վարկային արտոնություններ, ընդարարական նորմաների սահմանում արեւի էներգիայով սարքերի շահագործման ոլորտում, արեւային տարիֆների հաստատում (արեւ ժամանակ էներգիայի 1 կիլովատը եթե ասենք 50 դրամ արժենա, արեւ չեղած ժամանակ՝ 5-10 դրամ, դա արեւային տեխնիկայի կիրառումը խթանող միջոցառում կլինի): Արեւային տեխնիկայի գծով Հայաստանը միջազգային չափորոշիչների մակարդակ մոնոդոլ դիրքում կարող է լինել, որը կհաստատի եվրոպայում եւ այլն:

Լրացուցիչ տեղեկանք Վահան Համազասպյանի մասին

Եղել է աշխարհում առաջին ֆոտոսկանի հեղինակը, էլեկտրոնիկայում շատ գյուտեր ունի, բազմաթիվ կադրեր է պատրաստել ոլորտում: Հելիոսարքերից բացի՝ զուգահեռ ստեղծել է (իր խմբի հետ միասին) հելիոտեխնիկական մեթենաշինության բազա:

Աշխատում է շատ համեստ կյանքով, մեքենա չունի, ուտել-խմելու սիրահար չէ:

Ի դեմ

Վահան Համազասպյանի կուսակցի Ժիրայր Մեսեցին, ի դեմ, նույնիսկ օրենքդ է գրել՝ մի տեսակ հելիոֆիկացման հիմնը:

Ասեցեք առաջալ արեգակ արդար
Լույսի, ջերմության աղբյուր կենարար,
Բանական մարդը կամով իր ազատ,
Ավերակում է տունն իր հարազատ...

Թող որ մարդկային ճանաչը բարի,
Քեզ դաշնակից եւ գործընկեր լինի,
Լույս, ուժ, ջերմություն բազանից առնի,
Էկոլոգիական աղետը կանխվի...

Հորձանք է տրված այդ բարի գործին,
Արագած լեռան զուլալաղբյուր լանջին,
Բազմած Սառնաղբյուր հանրահայտ գյուղի,
Քառանձավի մոտ, հին սրբատեղի...

Գործն այդ անվանգ, գործն այդ կենարար,
Թող որ տարածվի աշխարհից աշխարհ,
Ողջ երկրագունդը հելիոֆիկացվի,
Ասեցեք օրհնությամբ աշխարհը լցվի... ■

Վերագնահատում

Ստեղծում ապատեսականացման գործընթացը ընդգրկեց հարյուրավոր գործառններ, տարբեր նշանակության շեմի ու շինություններ (այդ թվում՝ կրթամշակութային, առողջապահական եւ այլն), որոնք անցան մի բուռ տերերի ձեռք, ծննդոց վաուչերներով (սերտիֆիկատներով) խաբված, կաղիսալիստական դրախտով հմայված հարյուր-հազարավոր բանվոր-ծառայողներ, նույնիսկ՝ գործազուրկ: Ցախողվեց նաեւ բյուջեի՝ ապատեսականացումից սպասվելիք մուտքերի ապահովումը: Աննախադեպ վաստակաբեր ժողովրդի սոցիալական վիճակը: Հանածայն բոլոր հիմնական ցուցանիշների, Հայաստանը, որ ազիսարհի առավել առաջավոր երկրների շարքում զբաղեցնում էր պատվավոր 47-րդ տեղը, հետ մղվեց երրորդ հարյուրյակի շարք: Երկրում տիրող մթնոլորտից, բայց հիմնականում՝ սոցիալական կարիքից հարկադրված ունեցանք 1,5 միլիոն տարագիր...

Ցնցիչ, ցիծաղելի գնով մասնավորեցվեցին, հանախ՝ անարժան մարդկանց ձեռն անցան մեր ժողովրդի գիտակցված սխռմների գնով կառուցված արդյունաբերական, հանահումային գիգանտները, որոնց մեկը տուկայական գինը հարյուրավոր միլիոնների արժողություն ունի: Անշեղորեն հասարակական հարստությանը տիրածները սկսեցին գնել իշխանությունը, այն, ինչը մեզ, մի իդեալ նրբանկատությամբ անվանում ենք վերջինիս հետ «սերտաճում»:

Ապատեսականացումը, հիմնականում, հետադիմում էր սեփականատիրոջ ձեւն ու բաշխման հարաբերությունները բարեփոխելու, տուկայական արտադրահարաբերական նոր ինստիտուտներ ձեւավորելու նպատակ: Սոցիալական անհավասար բաշխումներ հարուցած այդ հեղաբեկիչ երեւույթը, որն ուղեկցվում էր արդյունքի կրիտիկական խոնարհությամբ, ի վերջո, չծառայեց իր բուն նպատակին: Միգ դուրս եկավ նաեւ այն հույսը, թե երկրի կառավարման հանձն դրաստանները ճանկածները կարող են մնացել, վերակենդանացնել մեր տնտեսության մառդ հասածները: Պարզվեց, որ սեփականաբերհումն արդյունում հայտնված խավը, հիմնականում, անընդունակ է ծանրակշիռ նեղդում անելու տնտեսության ռազմավարական որեւէ բնագավառում: Հանակարգային, գուցե թե՝ անխուսափելի տանջողանգային մեզ միանգամայն անդրադարձ էին: Ապատեսականացման մեկնարկի դրանից սկսած գործընթացից խիստ հետ մնաց օրենսդրական բազան, դրանով իսկ անկարող գտնվելով վերահսկել մասնավորեցման որոշ, ի դեպ, ոչ քիչ հակագրել տնտեսական լայնամասշտաբ հանցագործություններին:

Այդ բախտորոշ փոխակերպումին մեր խաղաղասիրական մտի արձագանքը թույլ էր ու անհամաձայն: Արդյունում՝ սեփականաբերհումն ու բաշխման եղած հարաբերությունների կոշտ դյանային՝ ծայրահեղացված «ինտերնացիոնալիստականը», փոխարինվեց թույլին հարատեւող ուժերի իրավունքի ազատություն ենթադրող կոսմոդրդիսական-մոնետարիստական կարիսալիզմով: Կոչենք. այդ ամենն առնեց ինչպես բարձրակարգ անդրասուս ու անդրասասիանաս ռազմավարության, այնպես էլ՝ անհրաժեշտ մարտավարության, իրավական ու դրատարի կազմակերպական բարակարգության դրանցներում: Ավելացած ոչ դրական կարեւոր՝ 70 տարի տնտեսական կենցության այլ կոորդինատներով առած հասարակությունը հոգեբանորեն ամենեին դրատուս չէր դրան: Մեր ռեֆորմատիան ողբերգավեճական դուրս եկավ. տնտեսագիտական-հաղարական տրիգոնության առաջնում ունեցանք տնտեսական անհեթեթ մի հանակարգ, գենոմոդիֆիկացված մի խառնածին: Գոյացվեց անբարեհույս, դրատիտային բիզնես, աշխատանի եւ կարիտայի տուկայի փոխարեն կաբատի ու շահանոլության ռախիտիկ տուկա. առավել հարուստներ դարձան անտեղ «գողականներն» ու կաբատատուն «օրենքով» ցնցվիկները ...

Ինչպես հետկոմունիստական երկրներում, Հայաստանում եւս ունեցանք ցնցակաթվածային թերադիայի հակաժողովրդական, հակասոցիալական նույն հետեւանքը, հարվարյան իմանուցներով առաջնորդվող «ցիկագրական տղերքների»՝ տնտեսագրական առաջնորդ էկոնոմիստ-տեխնոկրատների դիվերսանտությունը: Արդյունում՝ հանաժողովրդական տիրադուկ ունեցվածի անկիրթ թալան, հասարակության՝ խոր արմատներ գցած հեռավոր բեւեռացում, ունեզրկված միջխարի զանգված ու մի բուռ հարուստներ, հարստության եւ ուժերի դրաստանում/կաբատատության աճ...

Այսօր այլեւս կասկածներ չկան, որ հանրային սեփականությունից (մինչեւ 1998 թ. նոր օրենքը՝ մասնավորեցումը կասադրեց բաժնետոմսերի բաժանորդագրության, իսկ դրանից հետո՝ ուղղակի վաճառքի ձեւով), հասարակության մեծ մասին փայաբաժին հասցնելու գործը, գուցե թե՝ իրավասնեսագիտական անգրագիտության եւ անխելահասության դրատարոով, տարալվեց: Մեզանում վաուչերը դարձավ անիմաստ թղթի կտոր: Իրականում այդ երդանակով հասարակության անդամների սեփական բաժնեմաս ունենալու գործառույթն ամենափոքրաչափն է (հասկանալու լայն կիրառում ունի եվրոդայում), դրա վրա են կառուցված դեմոկրատական սոցիալիզմի տեսությունն ու առի սոցիալ-դեմոկրատիայի դրակտիկան: (Ի դեմ, սեփականատիրման ու բաշխման հարաբերությունների առանցքը կազմող «կոոդերատիվ սոցիալիզմի»՝ այսօր լայն տարածում ստացած տեսության սեղեռոնցներից է միջազգային համբավի արժանացած մեր հայրենակիցը, փայլուն գիտնական Վահան Տոնդյանցը):

Ապատեսականացման գործընթացի առավել բնորոշ խախտումներն էին՝ լիազորությունների սահմանազանցումը, ուղղակի դրատարկանությունների չկատարումը (թերացումը), վաճառվող ոչեական ակտիվների գների չիմնավորված իջեցումը, ոչեական իշխանության մարմինների ու չինովնիկների կողմից նյութական ակտիվների ու ինֆորմացիայի սեփականության անվերահսկելի տնօրինումը: Դրան ավելացած՝ իշխանության մարմիններում ծաղկող կոռուպցիան, կրիմինալի դեմ հակազդման համակարգի բացակայությունը: Իսկ մինչ այդ, դրատարի գուլիագրման ցենթարկվեցին եղած արդյունաբերական եւ գյուղատնտեսական կառույցները:

Ինչ գիտի արվեր

Ոչեական առավել արժեքավոր ակտիվների մեծ մասը հայտնվեց տնաբույս փոքրաթիվ սեփականատերերի ձեռքում, որոնց սոցիալական նոր կարգավիճակը, դոմֆեսիոնալիզմն ու բարոյականը չէին տեղավորվում հարատեւման հայտնի տեխնոլոգիաների շրջանում...

Իրավախոհական մեր բառարաբանում, ավելի՝ օրենսդրության մեջ տեղ չգտան «ոսկե բաժնետոմս», «ոչեական բաժնեմաս», «վերահսկիչ փաթեթ» հասկացությունները: Միայն այս դրությունով է, որ ոչեականությունն իրեն իրավունք է վերադարձնում երկրի անվտանգության շահերից բխող անհրաժեշտության դեպքում միջամտել մասնավորեցված ռազմավարական նշանակության, եւ ընդհանրապես՝ ազգային-ոչեական անվտանգությանն առնչվող տնտեսական օբյեկտների գործունեությանը: Մեր օրենքներում անվերադարձորեն ոչեական է ամրագրված լիներ հիմնական այն սկզբունքը, որ տնտեսության ռազմավարական ոլորտներում ոչեականությունը չի կարող զիջել իր մենաշնորհային դիրքերը, եւ որ ապատեսականացման, վաճառի (լինեն դրանք որեւէ գնողներ, թե՝ սեփական ճաղանաչողներ) ենթակա չեն ազգային անվտանգության համակարգի ռազմավարական հիմնականացիչ օբյեկտները: Այդ թվում՝ կարի համակարգն ու հեռուստահաղորդման բոլոր միջոցները, էներգիա արտադրող եւ բաշխող ձեռնարկությունները, ավիացիան՝ իր սպասարկող միավորներով, ճանապարհները ու երկրի բոլոր մասերն իրար ազատորեն միացնողները, գազամուղները ու դրանց մատակարարման օբյեկտները, ջրավազանները, ջրատարները ու ջրաբաշխիչ համակարգերը, նախագծային խոշոր ինստիտուտները ու հիմնական հեռագրությունները: Զբաղվող գիտական հիմնարկները, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընկերությունները, սահմանափակ հողերն ու այդ գոտիներում տեղադրված ձեռնարկությունները եւ, վերջապես, հոգեւոր-մշակութային հիմնական արժեք ներկայացնող օբյեկտները...

Առաջնահերթ կերդով օրենքով պետք է սահմանվեր, որ, եթե սեփականաբերհումն են մշակույթի, (նաեւ՝ առողջապահության) հիմնարկները, արդա մեկ անբեկանելի դայմանով՝ դրանք պետք է օգտագործվեն միմիայն իրենց նախատեղի նշանակությամբ. (անենկոդային իրավական ակտով նշված օբյեկտները հայտարարվեցին «ոչ կոմերցիոն դեռական ձեռնարկություններ»՝ իրավունքներով գրեթե հավասարվելով կոշիկի ու թխվածքի արտադրատներին): Ցիշտ կլիներ դարգել, թե, օրինակ, «փակ» ձեռնարկությունների ակցիաները, հակառակ ազգային անվտանգության հրամայականից բխող բանական տրամաբանության, ինչդէս հայտնվեցին մասնավոր անձանց ձեռքում: Եվ հետո՝ արժեր սուզել, թե որտեղից են գոյացել կոմերցիոն բանկերի կանոնադրական կապիտալները... Հայաստանում գրեթե ավարտվել է մասնավորեցման գործընթացը: Սկզբում (1992-1996թ.թ.) մասնավորեցվել է 3963 փոքր ձեռնարկություն, այնուհետեւ (1996-1999թ.թ.)՝ 1513 խոշոր ու միջին ձեռնարկություն: 2000 թվականից սկսած՝ ավարտին է մոտենում մնացած 900 դեռական ձեռնարկությունների մասնավորեցումը: Հողային փոխակերդումների արդյունքում ստեղծվել է տուրջ 300 հազար մասնավոր եւ կոլեկտիվ տնտեսություն, խթանվել է հողի առուվաճառքի գործառնությունը: ՀՀ կառավարության կողմից հատատված ռազմավարական օբյեկտների ցանկից հետագայում լուծարվել կամ սնանկ են ճանաչվել 35 ընկերություն կամ եղածի տուրջ 45%-ը:

Ելնելով անվտանգության շահերից, օրենքներում, մասնավորապես՝ հողային օրենսգրքում, պետք է ուղղակի բացառվեր օտարերկրյա դեռություններին, կազմակերդություններին ու անհատներին (թեկուզ եւ մեր հայրենակիցներին) դեռական կամ այլ տիպի սեփականություն հանդիսացող հողերի վաճառքի ցանկացած հնարավորություն: Իսկ վարձակալության հիմունքով օտարերկրյա որոշ սուբյեկտների հնարավոր հողահատկացումները դարձյալ պետք է կատարվեին երկրի դեռական շահերից ու անվտանգության գերակայություններից բխող օրենքներով: Հակառակ դեպքում բանը հասնում է երկրի որոշ տարածքների նկատմամբ իմնիշխանության կորուստ՝ հնարավոր ծանր հետեւանքներով հանդերձ:

Ապատեսականացումն ունեցավ նաեւ ազգային-դեռական անվտանգությունը շոշափող տարաբնույթ դրեւսներ: Համաձայն կոնցեսիաների մասին 33 օրենքի եւ ընդերքի մասին կոդեքսի՝ լեռնահանքային բոլոր հանքատեղերի միակ սեփականատերը դեռությունն է, որին եւ վերադարձվում է դրամի 12-15 տարով կոնցեսիայի տալու իրավունքը՝ ռազմավարական հումքի տարահանման վերահսկիչ փաթեթը իր ձեռքում դահելու դայմանով: Իրականում, սակայն, սահմանված դայմաններից շատերը չեն կատարվում: Բերենք մեկ օրինակ. այսօր մեր ոսկու հանքավայրերի 97%-ը կոնցեսիայով է տրված տարատահանման 9 ընկերությունների: Պետք է բացառվեն տնտեսական եւ այլ բնույթի իրենց էքսդանսիան ընդլայնելու, սուվերեն երկրների ազգային արժեք հանդիսացող բնական հարստությունների նկատմամբ տարատարածային հզոր ուժերի հավակնությունների հնարավոր դրսեւորումները, «էկոլոգական գաղութատիրության» փորձերը, կամ ռազմավարական ձեռնարկությունների եւ այլ օբյեկտների ու տարածքների բաժնեմասերի ձեւով ունեցած դարտերը փակելու, նաեւ՝ «տարած եւ ունեցվածք դարտի դիմաց» բանաձեւով կամավոր-դարտադրանի դրակտիկան: Ավելին, դետք է կանխվեն արդյունաբերական զարգացած երկրների կողմից երիտասարդ, թույլ դետությունները որոշ հումքի աղբյուր (կամ՝ էկոլոգիական դահեստարան) օգտագործելու միտումները: Ազգային անվտանգության տարառնալի լինելուց զատ, այս ամենը միջազգային հարաբերությունների, նաեւ՝ ներդետական լարվածության հարուցման դատճառ կարող են դառնալ: Խորհրդային Միության կազմալուծման ողբերգական օրինակը մեզ դետք է հուշի, որ այլեւս նման էքսպերիմենտ իրականացման ֆայտնվելու համար, ելնելով ազգային-դետական անվտանգության գերդատասալի հրամայականից, անհրաժեշտ է առավելագույն իմաստություն ցուցաբերել:

Պետական (հասարակական) ունեցվածքն այնպես «ապատեսականացվեց» (ասում էին՝ «սեփականաբերհումն»). սեփականությունը չի բնորոշվում), որ այդ հիման վրա նորմալ գործող տնտեսություն կառուցելն անհնարին է: Ապատեսականացման իրագործված անմիտ տարբերակով Հայաստանը կորցրեց արտադրության հիմնական բազային ճյուղեր: Այդ ամենը նման էր տոգիալ-տնտեսական լայնամասշտաբ դիվերսիայի: Պե՞տք էր սկսել, այն էլ՝ մեռելանման ապատեսականացումը. հասարակությանը ոչ ոք չհարցրեց, գիտական ենթակայումներ չեղան, մտքերի բախում տեղի չունեցավ: Դրսեւ հրահանգներով այն հղացին ու իրականացրին տնտեսագիտական կասկածելի գիտելիքներ ունեցող մի խումբ մարդիկ: Այսօր նրանք դրդրգականներին համար նախատեսված ինչ-որ անհդաբաշխ ու անհամոզիչ բացատրություններ են տալիս: Հիմնական փաստարկը՝ դետտնտեսությունը փլուզվում էր, դետությունը «դատերնալիստական» իր դատկան դերից հետ էր կանգնել, երկիրը գնալով դադարում էր աշխատել եւ ինչ-որ բան արտադրելու համար, տնտեսության գործառույթն իրենց վրա դետք էլ վերցնեին մասնավոր անձիք:

Տարբեր ժամանակներում տնտեսության փոխակերդման, նույնիսկ մասնակի բարեփոխման կարիք զգացող երկրներում, այդ թվում՝ հետդատերազմյան Գերմանիայում, Անգլիայում, Ճապոնիայում, «տոկային» թերադիայի դիմելու ռիսկ չարվեց: **Նրանք գնացին ասիճանական ազատականացման ճանապարհը:**

ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ, ԹԵ՞

ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնի մագիստրատուրայի բաղադրիչների ամբիոնի վարիչ

Այս հրատարակման հանդեպ ընթերցողի վերաբերմունքը կարող է միանշանակ չլինել: Թվում է՝ գնացքը գնացել է, իսկ ուշացած ուղեւորը փորձում է, այնուամենայնիվ, հասնել նրա հետեւից: Բանավեճի նյութ է թեման, այլ կարծիքներ նույնպես ցանկալի են, այնպես որ հրատարակելով հոդվածը՝ հրավիրում ենք բանավեճի:

Ապատեսականացումը՝ հանրային սեփականության ոչնչացման, կարելի է ասել՝ զգալի չափով ոչնչացման: Արդյունում՝ հասարակական-դետական սեփականության փոքրացում, բնակչության փաստացի թալան: Տնտեսական տրանսֆորմացիան, ըստ էության, հանգեցրեց երկու գլխավոր հետեւանքի. առաջին՝ դետական ունեցվածքը (ֆոնդերը) հասարակության լայն զանգվածների ձեռքից խլվեց եւ փոխանցվեց մասնավորին, երկրորդ՝ հողի վրա մասնավոր սեփականություն սահմանվեց, դրանով հասարակության հարստության հիմնական մասն անցավ նրանց, ովքեր մինչ այդ հասցրել էին տիրանալ մեծ գումարների...

Այլեւս գաղտնի չէ, որ 20-րդ դարի 80-ականների վերջերին մեկնված ապատեսականացման այդ «ծրագիրը», որը գաղտնագրված կոչվել է «Բալցերովիչի ոլորտ» (առաջինը կիրառվել է Լեհաստանում եւ կնկիել նրա վարչապետի անունով), մեկնվել է Միջազգային արտադրական հիմնադրամի կողմից: Շուկայական հարաբերությունների անցման նման ոլորտը նախատեսված էր թույլ զարգացած երկրների համար, նպատակ ունենալով իրականացնել դարձիակ տարադրամի լոկալ ամրագնում եւ տնտեսության վերջնական ապազգայնացում:



Արդյունում ինչ ունեցանք

Կուտակված հասարակական վիթխարի հարստության եւ բնակչության բանկային ներդումների հափշտակման, գների անխնայելի ու հանցավոր ազատականացման արդյունում սկսվեց կապիտալի նախասկզբնական կուտակումը: Ազգ ունայի տնտեսական հրաշի ծնողների նորեն նորել վայրագների իշխանությունը բռնազավթած օլիգարխների դասակարգ: Նորահարուստների տնտեսաբուծման թռիչքի մեջ փողոցից եկած ու միանգամից անվասակ մեծ հարստության, երկրի ունեցվածքի տեր դարձած ու բաշխման գործառույթներ ստանձնած, դետության արտադրող-մասնակարող-վաճառող ուղիղ ֆունկցիան բռնազավթած այս մարդիկ ներ-հով: Հետկոմունիստական երկրներում, այդ թվում՝ մեզանում, կատարվածը դրսից նրատակարդիր դատարդված վոլյունտարիստական ակտ էր: Արհեստական ճգնաժամ եւ «կառավարելի քաոս» ծնող ու դայթրնավանգ այդ ակցիան երկրների մեծ մասի նորակոչիկ ուժերի քաղաքական-տնտեսական հաավեսխալների, նրանց դրսեւ խորհրդականների շրջադատի հանցագործ դատարդանքի արդյունք էր: Օրինակ, եթե գները բաց թողնվեին ազատանաբար, այդ դեդքում մարդկանց նեդումները չէին արժեզրկվի, դրանով արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը չէին զրկվի վարկավորման հիմից: Շրջանառու միջոցներից տնտեսության գլխավոր ճյուղերի զրկումն էլ հենց հանգեցրեց չվճարումների, արտադրության, մշակույթի, գիտության, կրթության ահավոր անկման, կարելի է ասել՝ զգալի չափով ոչնչացման: Արդյունում՝ հասարակական-դետական սեփականության փոքրացում, բնակչության փաստացի թալան: Տնտեսական տրանսֆորմացիան, ըստ էության, հանգեցրեց երկու գլխավոր հետեւանքի. առաջին՝ դետական ունեցվածքը (ֆոնդերը) հասարակության լայն զանգվածների ձեռքից խլվեց եւ փոխանցվեց մասնավորին, երկրորդ՝ հողի վրա մասնավոր սեփականություն սահմանվեց, դրանով հասարակության հարստության հիմնական մասն անցավ նրանց, ովքեր մինչ այդ հասցրել էին տիրանալ մեծ գումարների...

Վերազգայնացում

կայացան որոնս հանիրավի մոռացված բնաբնակ տարածքներ, հանակարգից տուժածներ. «Ազգային սոցիոմշակութային ժառանգությունը վկայում է, որ իրականում Հայաստանի «առաջին ալիքի» նոր խոշոր սեփականատերերի մեջ չես գտնի պոֆեսիոնալ «կարիերիստներ», ազնիվ ու հնուս տնտեսվարող-կազմակերպիչ, հասարակական կոնսոլիդացիայի որեէ ոլորտում իր ներդրմամբ աչքի ընկած, վաստակաշատ, տնտեսագիտական իր գիտելիքներով որեէ կերպ իրեն ցուցաբերած անհատ, էլ չենք խոսում լուրջ տնտեսագիտական-կառավարական բուհում գոնե սովորած լինելու մասին: Ավելի ուշ՝ մեծահարուստներ դառնալուց հետո միայն նրանք պետք է ձեռք բերեին ճարտարագիտական անհրաժեշտությամբ մեզանում բազմացած «տնտեսագիտական» բուհերի իրավաբանի կամ տնտեսագետի, դիպլոմներ ու վկայականներ, նույնիսկ գիտական աստիճաններ:

Արդյունքում ունեցանք աջաջասական ոճի օլիգարխիական ոլորտություն, արարողություն փորձելով նեղնել «մարդու» կարիտատիվ: Ի վերջո, բարբարոսաբար խանդելով, զրկվեցինք անկրկնելի եղանից, իսկ երկրորդն էլ չի սացվում...

Մեզանում իրականացված արարոտեսականացումը հիմնված չէր արդյունավետության բարձրացման նպատակով այդ գործողության օբյեկտների՝ օգտաբերությունից (իրացվելիությունից) կախված ընտրության վրա: Այլ խոսքով, եղել է ոչ թե արարոտեսականացում-սոցիալիզացիա, այլ մաս առ մաս ոլորտային-հասարակական ունեցվածքի տարական հափշտակում, հետո միայն, կամ՝ հնարքաց իբր այդ ամենին տալով օրենսդրական-իրավական տեսք: Արարոտեսականացման վերջնարդյունքում երկրի կարողության երկու երրորդը բաժին հասավ բնակչության 6-10%-ին, որոնք վերջին այն, ինչն իրենց երբեք չի դրդակալել, ըստ էության, չէր էլ կարող դրդակալել: Արդյունքում մեծահարուստներն այս հանգավոր խաղի ընթացքում «ջրի գնով» սացան միլիոնավոր մարդկանց մեջ ու ձեռի ուժով ինքնազրկանով ու ինքնազոհողությամբ ստանձնյալներ ի վեր սեփական բարեկեցիկ ապրելակերպ ունեցող ընտանիքներ: Իր բաժինը սացավ նաև «ոլորտությունը»՝ հանձին խարդախությունը «տարարկող» ոլորտչինովնիկության:

Համաշխարհային Տարադրամային հիմնադրամի փորձագիտական հաշվարկներով Հայաստանի **խոշոր հարկատուները, որոնց թիվը դարձյալ սպյալներով ընդամենը 300 է, հարկերի ընդհանուր ծավալի ընդամենը 23%-ն են վճարում, եւ դա այն դեպքում, երբ նրանց վճարումների բաժինը պետք է կազմեր պետական ընդհանուր մուտքերի առնվազն 75%-ը:** Այսինքն, պետք է վճարվեր երեք անգամ ավելի: Սա մահացու ցուցանիշ է մի երկրի համար, որ կեղծ ողբերգական - հանդիսավոր տոնով հռչակվել է կոոտրդիայի դեմ պայքարի հաղթանակություն:

Այսպիսով՝ վերջնականապես ցրվեցին արարոտեսականացման հետ կապված առասպելները: Եվ այսօր դրա ամենաարդարացված նշանակալիներն անցան հանդուրժել են, որ սեփականաբնորհման ձեւն ու բաշխման նոր հարաբերությունները չբերեցին տնտեսության, հասկանալ՝ ձեռնարկությունների առաջադիմության բարձրացման, աշխատանքի արդյունավետության ածի եւ իմաստի չձեռեցին անհրաժեշտ թվով տնտեսար-սեփականատեր, ազգային կարիտատի երեւելիներ: Հօդս ցնդեցին լայնամասշտաբ ներդրումների, դրանցից սպասվելիք լայնածավալ մոդեռնացման պատասխանները: Սեփականացման ձեւի եւ բաշխման հարաբերությունների ազատությունական մոդելի չկայանալու եւ սոցիալ-տնտեսական ու այլ բնույթի հաղթահարած ճգնաժամի պատճառ դառնալու արդյունքում՝ մեր ժողովրդի աչքին այդ տնտեսակերտի վարկաբեկմանը ակամա նպաստեց Արեւմուտքը: Հենց արեւմտյան փորձագետները (ինչպես հետկոմունիստական երկրներին) մեր երկիրը մղեցին 90-ականներին սկսված սոցիալ-տնտեսական լայնամասշտաբ դիպերսիայի հավասարազոր արագընթաց ու հիվանդագին ոչեֆորմացիայի դասնակի տակ: Արեւմտյան հուշարար-խորհուրդների ծախահարությունների ուղեկցությամբ, գրեթե առանց բացառության, նախորդ բոլոր վարչարարները կոնֆորմիստ էին, աջաքաղաքական, որոնք եւ դրեցին առանց «անեքդոտիայի» սոցիալ-տնտեսական կենդանի օրգանիզմն անդամահատելու՝ մինչեւ օր ստանակվող հանցագործության հիմքը...

«Սոցիալական հավասարություն», տնտեսության «արարոտեսականացում» հարգող մի-ջազգային կազմակերպություններն ու այլ կառույցներ էլ, իրենց դարբնական զեկույցներով մեզանում ստեղծված հակադրելով «ռեդիսիվ» տնտեսություն ունեցողներին, այն ավելի ու ավելի բարձր նոմինացիայի արժանացնելով, ըստ էության, խոսխուսեցին թույլ տված սխալները, ավելի խորացնելով դրանք: Դա իմ հորինածը չէ. մասնավոր սեփականության «մարդու գաղափարի» վրա հիմնված հասարակությունը դասադարձված է կոոտրդիայի, մաֆիայի ու բռնության, հակադրից ամեն գնով խուսափելու, հեռանալ հեռի ճգնաժամության: Այսինքն այն ամենին, ինչն ունեն այդ «այդ գաղափարի առջեւ մոմ վառող երկրները»...

Այսօր հետկոմունիստական բոլոր երկրներին հուզում է այն հարցը, թե ինչու տրանսֆորմացիոն փոփոխությունները այդքան հիվանդագին ու վնասաբեր եղան, հաղորդեցին ճգնաժամեր, նույնիսկ՝ անդառնալի կորուստներ: Փասարկությունները շատ են, բայց, որոնս հիմնական պատճառ բերվում են հանաժողովրդական անհասիկ ունեցվածի արժեքի սխալ ու անկազբումի գնահատման եւ այդ իրավունքի փոխանցման հարցում թույլ տված հանցագործ սխալները: Այդ սխալներին հեռահրավաբանական ենթադրյալ գնահատականներ են տալիս, հանի որ, փաստորեն, մեր իսկ ձեռքով ոչնչացվեց ու փոշիացավ նոր, լիարժեք անկախացման եւ բարեկեցիկ կոոմիներներով պարելու տարածային վիճակում հայտնված մեր նեռուը:

Այսօր հետկոմունիստական բոլոր երկրներում շատ է խոսվում այն հարցի շուրջ, թե ինչ է եղել արդյոք 1990-ականներին սկսված արարոտեսականացումը՝ "Բանալիներ" հարգելի ժամանակահատվածում իրականացած արարոտեսականացման վերանայման՝ ռեդիսիվացման մասին է: Տարածում մի երեւույթ, որը, չգիտես ինչու, մեզանում այնպես էլ օտարազգի հարց չդարձավ: Եթե այդ բանը, թեկուզ եւ ուշացումով, չարվի, դարձյալ կլինի անվանգ ու անցնում առաջընդարձակ հասարակական համերաշխությունը եւ թացը, հասարակական համերաշխությունը եւ թացը, հասարակական սոցիալ բարոյահոգեբանական մթնոլորտ սոցիալ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումը... եւ երաշխիք չկա, որ առկա վիճակը չի կրկնվի:

Հետկոմունիստական բոլոր երկրներում շատ են վիճել

Արեղծվածներ

ԴԱՎԻԹ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Միջնադարյան սոլասիկայի հանրահռչակ ներկայացուցիչներից մեկը՝ լեգենդար ասվածաբան Անսելմ Քենթրբերացին փորձում էր Աստծո գոյությունը ապացուցել՝ հիմնվելով այն փաստարկի վրա, որ եթե Աստված գոյություն չունենար, ապա անհնարին կլիներ բարձրագույն վերաբերյալ պատկերացումը մարդկանց բանականության մեջ: Շամբալայի առասպելին հավատացող շատ եվրոպացիներ երբեմն ապավինում են հենց այս հնամենի փաստարկման համակարգին եւ հաստատում են, որ չէր կարող այդքան աղմուկ լինել մի բանի շուրջ, որն իրականում գոյություն չունի:

Իսկ առասպելները միշտ նոր առասպելներ են ծնել մարդկանց ուղեղներում:

Ասիական խորհրդավոր Շամբալան, Պլատոնի երկխոսություններում նկարագրված Ատլանտիդայի պես, բազմաթիվ հակասական բանավեճեր է սեղծել թե՛ գիտնականների, թե՛ սովորական հետաքրքրասերների շրջանում. 15-16-րդ դարերում Շամբալան փորձում էին գտնել բուդդայական ուխտավորները, Ցիգվիս միսիոներները եւ չին փիլիսոփաները: Առասպելական ու կախարդական այդ երկիրը որոնում էին Հիմալայներում, խորհրդավոր Տիբեթում, Աֆղանստանում: 20-րդ դարի սկզբներին Շամբալայի որոնողական ափսառանմներով զբաղվում էին տարբեր երկրներից ժամանած գիտական արշավախմբեր, որոնցից ամենահայտնին, թերեւս, Նիկոլայ Ռերիխի արշավախումբն էր (վերջինս հատկապես զբաղվել է Արեւելքի մշակութային ժառանգության ուսումնասիրությամբ եւ Շամբալային անդադարձել է իր նավալուն ափսառության՝ «Ագնի Յոգայի» մեջ): Այս թեման հատկապես սիրում էին թեոսոֆները (նրանք, որոնց կանոն, բարձրագույն արժեք էին համարում Արեւելքի իմաստությունները՝ թեռագնահատելով արեւմտյան էֆեսոնեական արժեհամակարգը), որոնցից ամենակարկառուններից մեկը՝ Ելենա Բլավատսկայան նույնիսկ գրում էր սրբազան Շամբալայում ապրող հինգ գերիմեելեկտուալ մարդկային ռասաների մասին: Նույնիսկ սովետական ՆԿՎԴ-ն ու Յոգիսական Գերմանիայի հատուկ ծառայությունների (Գերմանիայում նույնիսկ ստեղծվեց «Ահարթ» («Ճախնիների ժառանգություն») ինստիտուտը, որ զբաղվում էր արիական ռասայի արեւելյան արմատների որոնման ափսառանմներով) կողմից Տիբեթ էին գործուղվում գաղտնի արշավախմբեր, եւ այդ ծրագրերի իրագործման համար լուրջ պետական միջոցներ էին հատկացվում, Շամբալան դարձել էր Հիտլերի ու Ստալինի մրցակցության յուրահատուկ կռվախնձոր: Նույն Ն. Ռերիխը, ով տարիներ շարունակ զբաղվել է Շամբալա երեւույթի ուսումնասիրությամբ, 20-րդ դարասկզբին գրում է, որ Արեւմուտում չկա մի ափսառություն՝ նվիրված Ասիայի անկյունաքարային հանդարտող այս հասկացությանը: Այն ժամանակից ի վեր ափսառիում այս թեմայի շուրջ բազմաթիվ գրքեր եւ գիտական հոդվածներ են տպագրվել, սակայն առասպելական Շամբալան այդպես էլ թաքնված է մնում խորհրդավոր շղարշով: Բազմաթիվ ճանապարհորդներին ու գիտական արշավախմբերին այդպես էլ չհաջողվեց գտնել հավատի վկայություններ այն մասին, որ անցյալում գոյություն է ունեցել սրբազան Շամբալան: Շամբալայի առասպելն առավել գրավիչ էր դառնում հատկապես մի յուրահատուկ խթանիչ գաղափարի շնորհիվ, ըստ որի՝ Մեսիան դուրս էր գալու հենց այդ կախարդական երկրից:

Սրբազան երկրի մասին երբեմն խոսում էին՝ այն այլաբանորեն պատկերելով որպես «մաքուր երկիր», որը տեղակայված է բացարձակապես այլ իրականության եւ տարածաժամանակային միջավայրում, որտեղ կարող էին հասնել միայն հոգեւոր բարձր մակարդակ ձեռք բերած եզակի անհատականությունները: Շամբալան՝ որպես բացառապես հոգեւոր իրողության ոլորտ, կենտրոնական տեղ գրավեց տիբեթյան Կալաչակրա ուսմունքի (տիբեթյան կոնկական ուղղություն) մեջ եւ որպես հոգու հատուկ որակ, դարձավ Կալաչակրայի հետեւորդների հոգեւոր վերջնամթատակը, որին կարելի է հասնել երկարատեւ ու բարդ մեդիտացիայի շնորհիվ:

Հին ասիական առասպելների ժամանակակից վերարտադրությունների տարբեր դրսեւորումներում խոսվում է այն մասին, որ Շամբալայում ապրում են իմաստուններ, ովքեր տիրապետում են այնպիսի էզոթերիկ գիտելիքի, որը մարդուն լիարժեք իշխանություն է տալիս ափսառիի նկատմամբ, եւ այն ընդլայնները, որոնք «համաձայնության» կգան սրբազան Շամբալայի հետ, կիշխեն ափսառիին եւ մարդկանց (ի դեմ, հենց այս առասպելն էր սիրել գերտերություններին՝ հետաքրքրվել այս երեւույթով):

Չնայած Շամբալան համառորեն ասոցացվում է տիբեթյան բուդդիզմի հետ, սակայն իրենք, տիբեթյան լամաները՝ հոգեւոր ուսուցիչները, սկեպտիցիզմով են վերաբերվում համանման առասպելներին: Իսկ բուդդայական որոշ ավանդույթներում Շամբալայի մասին ավանդությունները ընդհանրապես բացակայում են: Մի շարք մասնագետների կողմից գաղտնի գիտելիքների երկրի մասին ուսմունքը վերագրվում է Տիբեթի ժամանակակից բոն կրոնին, որը մինչեւ բուդդիզմի տարածվելը անկյունաքարային նշանակության հավատալիքների համակարգ էր լեռնային այս գոտու բնակիչների համար: Այս մեկնակետից՝ Շամբալայի մասին լեգենդը սերտորեն կապված է Տոմպա Շենրաբի անվան հետ, որը հնում եղել է Շամբալա երկրի տիրակալը եւ բոն կրոնի հիմնադիրը: Ըստ ավանդության՝ Տոմպա Շենրաբը, լինելով երկնաբնակ էակի եւ երկրային կնոջ որդի, ծնվել է Օրմո Լունգրինգ երկրում (սանսկրիտերեն արտասանությամբ՝ Շամբալա): Շենրաբը, իր հարազատ եղբայր Յանգ-Պաչանը դարձնելով գաղտնի գիտելիքների օրոն, մարդկանց այնպիսի ծիսակարգ սովորեցրեց, որը թույլ էր տալիս սանձահարել չար ոգիներին եւ սանձել աստվածների բարեհաճությունը: Այդ նույն հաղթում տիրակալը իսկապես տաճար կառուցեց եւ մշակեց բոն ուսմունքի խորհրդանիշը՝ շուրջ տված սվաստիկան: Եթե դասական վեդայական համակարգում սվաստիկայի պտույտը ժամսլաքի ուղղությամբ է, ինչը խորհրդանշում է արեւի շարժման ուղղությունը, ապա բոնյան սվաստիկան հակառակ կողմ է թեքված եւ պետք է կանխորոշեր մարդկանց ամենակարողության անդրժելի հնարավորությունը, որը թույլ կտար մոգության միջոցով կոտրել աստվածային ափսառիակարգը, աստվածների կամքը ենթարկել իրենց, հաստատել բացարձակ վերահսկողություն ներքին՝ հոգեւոր, եւ արտաքին՝ նյութական ափսառիների նկատմամբ:

Մինչեւ այսօր տարբեր արշավախմբեր են ժամանում Տիբեթ՝ Շամբալայի որոնման ափսառանմներ կազմակերպելու, Շամբալայի կիզակետը գտնելու նպատակով:

Հետաքրքիր են 2005 թ. Տիբեթից վերադարձած ռուսական արշավախմբի ամփոփած արդյունքները: Արշավախումբը, որն իր ուսումնասիրությունները կատարել էր Հնդկաստանի ու Չինաստանի սահմանգծին, որոնման իր ափսառանմները կենտրոնացրել էր հատկապես Կայլաս խորհրդավոր սարի շրջակայքում: Խմբի ղեկավար Ալեքսանդր Սելվաչեւի վկայությամբ՝ միլիոնավոր բուդդիստներ, հինդուներ, ջայնիստներ եւ բոն կրոնի հետեւորդներ 6714 մ բարձրություն ունցող Կայլաս սարը համարում են երկրագնդի ամենասրբազան վայրը: Նրանք գտնում են, որ լուսավորվել ցանկացողները պետք պտտվեն 108 անգամ (մի պտույտը կազմում է 56 կիլոմետր) սարի շուրջ, կատարեն, այսպես կոչված, Կորա, ինչը նրանց կազատի մեղքերից եւ իրական հնարավորություն կընձեռի հասնել նիրվանային՝ բացարձակ անխոտոր, իմաստաբաղ ու երջանիկ աստիճանի կամ հոգեվիճակի:

Մեկ այլ արշավախումբ, որը ղեկավարել է մեկ այլ ռուս գիտնական՝ բժշկական գիտությունների դոկտոր Զ. Զախարովը, իր ուսումնասիրությունները եւս կատարել է նույն Կայլաս լեռան շուրջ: Արշավախումբը փորձել է պտտվել լեռան շուրջ բոն ավանդույթի համաձայն եւ հայտնաբերել է մի հովիս, որը նշված չէ ոչ մի քարտեզի վրա: Արշավախումբն այնտեղ հայտնաբերել է նաեւ յոգայով զբաղվող մի ամբողջ համայնք, ընդ որում, այդ միջավայրը, գիտնականների դիտարկմամբ, անտանելի է նույնիսկ ֆիզիկապես գերապատասխան օրգանիզմների համար: Արշավախումբն 400 մետր էր մնացել, որպեսզի հասներ լեռան գագաթին, սակայն խմբի անդամների ֆիզիկական դիմադրողականությունը դա թույլ չի տվել. նրանք ունեին լեռնային հիվանդության բոլոր նախանշանները: Այնուամենայնիվ, արշավախմբի ղեկավարը, մի կողմ դնելով Շամբալայի հոգեւոր կենտրոնի մասին բոլոր կոնկական առասպելները, խոստովանել է, որ Կայլասը երկրագնդի կարեւորագույն էներգետիկ կենտրոններից մեկն է:

Մինչ արեւմտյան քաղաքակրթությունը փորձում է հասկանալ Շամբալա երեւույթը՝ փորձելով գտնել սրբազան երկրի ֆիզիկական տեղակայությունը, խորհրդավոր Արեւելքի՝ մասնավորապես Տիբեթում բնակվող բազմաթիվ ուսուցիչներ եւ հոգու ու մարմնի կատարելագործմամբ զբաղվող գուրուներ պարզապես վեհանձնորեն ժպտում են արեւմուտցիների անսպառ էնտուզիազմի վրա: Արեւելքի շատ ուսուցիչներ սովորեցնում են, որ սրբազան Շամբալան կարելի է շոշափելի դարձնել հոգեւոր ներհայեցողության միջոցով՝ երկարատեւ ու խորը մեդիտացիոն պրոցեսների շնորհիվ: Իսկ արեւմուտի մարդու համար սկզբունքորեն անհնար է Շամբալայի ֆենոմենը: Տիբեթաբան Ռ. Թուրմանի բնորոշմամբ՝ Տիբեթի մշակույթը միշտ միտված է մարդու ներին՝ հոգեւոր եւ բանականության շերտերի նախահիմքերի բացահայտմանը, իսկ արեւմուտին առավելապես հետաքրքրում է մարդու գործունեության նյութական շերտերի, արտաքին՝ ֆիզիկական ընդարձակումը, որը դրսեւորվում է սկսած խաչակիրների՝ նոր երկրներ նվաճելու արշավանքներից, վերջացրած մարդու՝ բնությունն իրեն ենթարկելու պարզունակ փորձերով, ասենք, տիեզերքի նվաճում եւ այլն:

Ընդհանրապես՝ մասնագետների շրջանում բազմիցս ենթադրվել է այն հարցը, թե արդյո՞ք կարող է արեւմտյան ափսառիայացը կրող ուսումնասիրողը լիովին հասկանալ Արեւելքի իմաստությունները, ներթափանցել Արեւելքի բարդ ու դժվարըմբռնելի կոնափիլիսոփայության խորքերը: Արեւելյան արժեհամակարգը եւ գենեզիսական կողը կրող բուդդիսմ, հինդու եւ այլ ուսուցիչներ, ուսումնասիրողներ կարծում են, որ արեւմուտցիներն ունեն խիստ դոգմատիկ հոգեբանություն եւ կարծրատիպային մտածելակերպ, ինչը թույլ չի տալիս վերջիններիս դուրս գալ մտավոր ու հիվանդագին մոգարգելքներից (տարոն), Արեւելքի մշակութային ժառանգությունը գնահատել՝ տուրք չտալով արեւմտյան հոգեբանական մշակութային բարդույթներին: Այնպես որ, Շամբալայի՝ արեւմտյան մասնագետների ուսումնասիրություններին Արեւելքում մեծ մասամբ, մեղմ ասած, հումորով են վերաբերվում:

Այնուամենայնիվ, Շամբալայի երեւույթին առնչվող բոլոր նյութերը, գիտական, ափսառիագրական ուսումնասիրությունները, տարբեր ավանդույթների առասպելները ոչ թե լույս են սփռում երեւույթի մութ անկյունների վրա, այլ ընդհակառակը՝ Շամբալան դարձնում են առավել խորհրդավոր ու առասպելական: Եվ սովորական հետաքրքրասերը, ամեն դեպքում, ցանկանում է, որ իրեն ուղղակի մատնացույց անեն Շամբալան, նա ուզում է իր մտապատկերների մեջ ունենալ սրբազան Շամբալայի հստակ ուրվագիծը, նա նույնիսկ ցանկանում է տեսնել անտեսանելին, կամ՝ գոնե հավատալ դրան: ■

Է էջից

ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ, ԹԵ՞ ...

Հայաստանի պարագայում օդում կախված է մնում ոչ փիլիսոփայական այն հարցը, թե պետությունը մտադի՞ր է ազատել վիճակը, վերականգնել սոցիալական արդարությունը: Այսինքն՝ օլիգարխները «մեղքերի թողություն» կստանա՞ն, թե՞ ստիպված կլինեն «կիսվել» ժողովրդի հետ, ինչը եւ եղել է նրանց նախասկզբնական նպատակը: Լուրջ մասնագետներն առաջարկում են պակասող փողերը հետ վերադարձնելու, մեր կարծիքով՝ տրամաբանական եւ ապապետականացման արդյունքը չվերանալու իրավատնտեսական եղանակներ: Նախ՝ պետությունը պետք է կապարի ունեցվածքի գույքագրում (ինվենտարիզացիա), որպես դրա ընդհանրական արժեքը: Դա պետք է որոշա սկիզբ արվեր, նախկին արտադրական պոտենցիալի փոփոխումը (այդ մասին 15 տարի է, ինչ ասում են Հայաստանի առաջադեմ քաղաքական որոշ ուժեր): Որից հետո անհրաժեշտ կլիներ սահմանել գույքահարկ (ոչ այնպիսի, ինչ այսօր գոյություն ունի). ով կարող է վճարել հարկը, նա էլ կստանա եկամուտ որպես արդյունավետ սեփականատեր: Նա, ով չի կարող վճարել, թող բարի լինի հրաժարվել այդ ունեցվածքից: Եվ հետո՝ անհրաժեշտ է արտադրական կարիքները առանձնացնել երկրի ընդերքից: Սեփականացնելով բնությունները, իրականում ընդերքը եւս սեփականացվեց (պետք է սահմանազատել այդ հասկացությունները): Պետությունը տիրում է ընդերքին եւ ինքն է վաճառում հանույթը, իսկ ընկերությունները զբաղվում են արդյունահանումով եւ դրանից ստանում եկամուտ: Այս դեպքում օլիգարխների գերշահույթը նրանցից խլելու հարկ չի լինի:



Վերջաբանի փոխարեն

... Հավանաբար արդարության վերականգնման ինչ-որ տարբերակ կգտնվի: Միայն թե դժվար է ասել՝ ինչպիսին եւ երբ: Առավել եւս՝ թե ինչի վրա կեռխվեն կեղտոտ արարքագործման «մարումից» գոյացած փողերը, եթե ցանկալի ելք գտնվի: Այն կնոջաբակամրվի լայնածավալ սոցիալական ծրագրերի՞ն, թե՞ կտարուլանվի պետական բյուջեի մեջ, կլցվի պետական լիցենզիկների գրպանը: Ըստ որում, անօրինական ունեցվածքի ու հարստության հետ վերադարձին հասարակության գերակշիռ, հատկապես՝ ունեցվածք-աղքատացած մասը, առնվազն ըմբռնումով կմոտենա: Այդ ակնկալիքն, ինչ խոսք, մեծապես կնոջաբակի իշխանության հեղինակությանը բարձրացմանը:

Դիմախեղված ապապետականացման իրավաքաղաքական գնահատականը, հետեւանքները մանրամասնելուց հետո, համոզված եմ, տալու են երկրի նախագահը, ԱԺ-ն, կառավարությունը: Քանզի նահանջի տեղ այլեւս չկա....

Հասարակության օրախնդիր պահանջներին արձագանքելու նպատակով վերջին շրջանում ակտիվացել են իշխանության եւ գործարար ափսառիի ներկայացուցիչների հանդիպումները, որոնցում քննարկվում են երկրի առջեւ ծառացած սոցիալ-տնտեսական անվտանգությանն առնչվող տարբերյալ հարցեր, դրանց լուծումը կապելով սպեցիալ տնտեսության ծավալները հետեւողականորեն կրճատելու (ինչը ՀՀ ներկա նախագահն առաջիկա խորհրդաժողովներն ու զգուշավոր անվանում է սպեցը օրինական դաշտ բերել), պետությունը գործարար ափսառի հարաբերությունները կանխատեսելի դարձնելու, ապապետականացման գործընթացը խելամտորեն սրբագրելու, հարկային-մաքսային ափսառանմները արմատապես վերանայելու հետ:

Այս իմաստով հուսադրող են ՀՀ նոր նախագահի եւ նոր վարչապետի գործելակերպը եւ կառավարության՝ ԱԺ հասցեագրմամբ ներկայացված ծրագիրը: ■

Ռուս-վրացական դեմարշներ՝ ռազմական դառնալու հավանականությա՞մբ

Վրաստանը հեռ է կանչել դեսպանին

Ռուս-Վրացական հարաբերությունները գնալով հիբեցնում են այն անհաջողակ, ավելի շուտ՝ անհաշտ ամուսիններին, որոնք այդպես էլ չեն կարողանում ոչ միասին ապրել, ոչ էլ բաժանվել իրարից: Եվ երբ այդօրինակ ամուսինները տարվա մեջ մի քանի անգամ բաժանվում են, մարդկային ու ոչ մարդկային բոլոր մեղքերի մեջ միմյանց մեղադրելն ու անհաշտության խոստումները դառնում են սովորական ու ոչ ազդեցիկ:

Երեկ կեսօրին Ռուսաստանի մայրաքաղաքն է լրել այդ երկրում Վրաստանի դեսպանը՝ վրաց արտգործնախարարի նախորդ օրն արված հայտարարության հածածայն: Ընդ որում, Մոսկվայից հեռանալիս դեսպան Էրոսի Կիցմարիշվիլին հայտարարել է, թե չգիտի Թբիլիսիում մնալու ժամկետը:

«Ազգը» դեռևս հուլիսի 10-ի համարում տեղեկացրել էր, որ վրացական կողմի հայտարարությունների համաձայն, ռուսական չորս կործանիչներ խախտել էին վրացական օդային տարածը: Այդ օրը երեկոյան ռուսաստանյան կողմն ընդունեց, որ իսկապես նման միջադեպ իրողություն է, ինչին որոնոս արձագանք վրացական կողմն, ի դեմս արտգործնախարարի, հայտարարեց դեսպանին Մոսկվայից հետ կանչելու մասին:

Վրաստանի ԱԳՆ-ն ռուսական կողմի նման խոստովանությունը, թե ռուսական ինքնաթիռները կարճաժամկետ թռիչք են կատարել Հարավային Օսիայի տարածքում ադրանահեղությունը կանխելու եւ իրավիճակը իրավական շրջանակներում պահպանելու ցանկությամբ, գնահատել է որպես ցինիզմ, պատասխանական հայտարարության մեջ ընդգծելով, որ «այդօրինակ ցինիկ ագրեսիան դարձել է ռազմական ագրեսիա»:

Ու չնայած այս համաձեռնում մասնավորապես Վրաստանի խորհրդարանն իր արտահերթ նիստում Ռուսաստանին ագրեսոր է որակել, հիմնում ամեն դեպքում ոչ թե կոնկրետ կործանիչների թռիչքներն են, այլ ավելի շուտ դեռևս ապրիլի 16-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի որոշումը՝ Աբխազիային եւ Հարավային Օսիային օգնություն ցույց տալու առնչությամբ, որ հետեւեց ոչ պակաս աղմկահարույց մեկ այլ որոշման՝ Աբխազիայի նկատմամբ տնտեսական սահմանափակումները վերացնելու մասին:

Իր հերթին Ռուսաստանի ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել, թե Թբիլիսիի եւ Սուխումի երկխոսությունի վերականգնումը հնարավոր է միայն Կոդորի կիրճից վրացական զինուժի դուրսբերումից հետո: Հայտարարությունը տարածվել է հենց երեկ Մոսկվայում ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի եւ Աբխազիայի առաջնորդ Սերգեյ Բաղապշի հանդիպումից հետո:

Տարօրինակ կլիներ, եթե անգամ հայտարարելով Հարավային Օսիայի օդային տարածքում հայտնված ռուսական ռմբակոծիչների փաստի մասին, ռուսական կողմն այս անգամ անմեղադրանք թողներ վրացական կողմին: Ըստ այդմ, հերթական տադանը վրացական կողմի հեղինակաթափ է: Ամեն դեպքում, նկատի ունենալով սեփական փաստարկումներն ու մոտեցումները՝ ռուսական կողմը, ի դեմս ռուսական խաղաղարար ստորաբաժանման «վրաց-աբխազական հակամարտության գոտում իրավիճակի սրման պատճառով բարձրացել է ռազմական պատասխանությունը»:

Թերեւս այստեղ խնդիրն ու մտահոգիչը բնավ էլ վրացական կամ ռուսական արտաքին գերատեսչությունների փոխադարձ վիրավորանքներն ու մեղադրանքները չեն: Առավել մտահոգիչ է, որ Վրաստանում անգամ խորհրդարանի մակարդակով հավանական են համարում հենց ամառանը ռազմական գործողությունների վերսկսումը աբխազական հակամարտության գոտում: Եվ եթե դրան գումարենք ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի Վրաստան վերջերս կատարած այցելությունն ու այդ ընթացքում արված հայտարարությունները, ապա տպավորություն կարող է ստեղծվել (ինչպես ռուս-վրացական հարաբերությունների կնճռոտ բոլոր պահերին), թե տվյալ դեպքում էլ հզորության, ազդեցության, դիրքորոշումների ցուցադրությունն ու հակադրությունը Ռուսաստան-Միացյալ Նահանգներ հարթությունում է:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հեռուստաէկրանին տպավորիչ էր վրացի օրենքով գողերի ձերբակալությունը

Ռուսաստանի ՁԼՄ-ները լայնորեն տարփողեցին կազմակերպված հանցավորության դեմ պայքարի Մոսկվայի մարզի տարածային վարչության գործողությունը խափանելու ռուսաստանաբնակ վրացի օրենքով գողերի հանցահավաքը մերձակա գեսերից մեկում «խաղաղ» լոգարկող սրճարանում: Դժվար է ասել, միլիցիոներների այս նախաձեռնությունը մտնո՞ւմ էր Ռուսաստանում ծավալված հակավրացական քարոզարշավի մեջ, թե ոչ:

Գեղարվեստական տեսակետից հատուկ ծառայության մարտիկների վայրէջքը ուղղաթիռից նավի տանիքին տպավորություն էր գործում: Նվազ արդյունավետ չէին նաեւ մոտ չորս տասնյակ գողերին հատակին պառկեցնելը կամ ձեռքերը ծոծրակներին շարի կանգնեցնելը: Սակայն բոլոր հեռուստալիներն ու թերթերը միաժամանակ ընդգծում էին, որ այդ անձանց դժվար է մեղադրանք ներկայացնել, քանի որ նրանք անձամբ չեն մասնակցում հանցագործությունների կատարմանը: Այդ պատճառով էլ նման «տպավորիչ» գործողություններն ավելի շուտ դիտվում են որպես նախազգուշացնող կամ սոսկ ահաբեկող:

